



ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Թուրքիային Հայկական Ուղղութեամբ Հարուածի Կարող է Բերել Ռուսաստանը

ՅԱԿՈԲ ԲԱԴՍԼԵԱՆ

Ռուս-թուրքական լարուածութիւնը սկսել է ուղեկցուել որոշակի տեղեկատուական հոսքերով, թէ թուրքիան Ռուսաստանին հարուածեւոյն ուղղութիւն կ'ընտրի Արցախի հակամարտութիւնը: Այդ միտքը տարբեր ձեւակերպումներով եւ շեշտադրումներով արտայայտում են որոշ լրատուամիջոցներ եւ կայքեր, այդ թւում որոշակի ճանաչում ունեցող:

Հայկական հասարակութիւնը համացանցային տիրոջութեամբ ակտիւորէն տարածում է այդ տեղեկութիւնները, յաճախ առանց ուշադրութիւն դարձնելու, թէ այս կամ այն աղմկոտ վերնագիրն այն մասին, թէ թուրքիան Ռուսաստանին հարուածեւոյն է Արցախի միջոցով, ինչ լրատուամիջոցի է պատկանում, որ քան է դրա հեղինակութիւնը, ընդհանրապէս ինչպիսին է

է գերծ չմնալ, եւ շատ դժուար է ասել, թէ «մայրցամաքային Ռուսաստանից» կտրուած Ղրիմում Մոսկուան հակադրութեան ինչ արդիւնաւէտ միջոց կարող է գտնել ինդիւիդները կանխելու կամ լուծելու համար:

Միւս ուղղութիւնը, որն է տարբերութիւն Արցախի շատ աւելի հասանելի հարուածի ուղղութիւն է եւ մօտ Ռուսաստանի մաշկին, Աբխազիան է, որտեղ Անգարան կարող է ազդեցութեան հնարաւորութիւն գտնել թուրքիայում եղած աւելի քան 1,5 միլիոն արեւմտահայկական համայնքի միջոցով:

Ինչ վերաբերում է Արցախին, ապա այստեղ ամէն ինչ շատ աւելի բարդ է թուրքիայի համար, որովհետեւ այս ուղղութեամբ թուրքիայի հնարաւորութիւններն ապահովում էին հենց Ռուսաստանի հետ դաշնակցութեամբ կամ գործակցութեամբ, այսինքն թուրքի-

Ինչ վերաբերում է Արցախին, ապա այստեղ ամէն ինչ շատ աւելի բարդ է Թուրքիայի համար, որովհետեւ այս ուղղութեամբ Թուրքիայի հնարաւորութիւններն ապահովում էին հենց Ռուսաստանի հետ գործակցութեամբ

դրա փաթեթաւորումը:

Տպաւորութիւն է, որ այդ տեղեկութիւնները հենց հայկական հասարակութեան համար էլ տարածում են, որ հայերը ակտիւորէն տարածեն: Ո՞րն է դրա նպատակը՝ հոգեբանական ճնշումը հայութեան վրա: Դա գործադրում է Ռուսաստանը, պատրաստուելով դրա միջոցով որեւէ բան պարտադրել Հայաստանին, թէ՛ տարածողը թուրքիան են ու Ատրպէյճանը:

Շատ դժուար է ասել, քանի որ յայտնի չեն այն իրական շրջանակները, որ կանգնած են այդօրինակ տեղեկատուութիւն տարածող լրատուամիջոցների հետեւում:

Եւ արդեօք այդօրինակ տեղեկատուութեան տարածման նպատակը շեղումը չէ: Ոչ թէ հայ հասարակութեանն ինչ որ բանից շեղելը, այլ գուցէ ուսանելին ինչ որ բանից շեղելը: Ասենք, շեղելն այն բանից, որ թուրքիան իրականում Ռուսաստանին հարուածի շատ աւելի մօտիկ եւ կենսունակ թիրախներ ունի՝ Ղրիմ եւ Աբխազիա:

Եթէ Անգարայի եւ Մոսկուայի յարաբերութիւնը շարունակի լարուել աճող ընթացքով, ապա Ռուսաստանին հարուած հասցնելու համար թուրքիան ունի շատ աւելի հասանելի, ու թէ իրեն մօտ, թէ Ռուսաստանի մաշկին շատ աւելի մօտ ու ցաւոտ թիրախներ՝ Ղրիմը ու Աբխազիան: Ղրիմում կայ մեծաթիւ թաթարական համայնք, որը գտնւում է թուրքիայի ազդեցութեան ներքոյ: Այդ համայնքը կառավարում է թուրքիան եւ դրա միջոցով Անգարան կարող է շոշափելի ինդիւիդներ յարուցել Ղրիմում: Եւ եթէ մինչ այժմ Անգարան դրանից գերծ էր մնում, քանի որ Ռուսաստանի հետ եղբայրաբարեկամական յարաբերութիւն էր, ապա լարուածութեան դէպքում կարող

ան այստեղ ուժեղ է Ռուսաստանով, ոչ թէ Ատրպէյճանով: Հետեւաբար առանց Ռուսաստանի թուրքիան Արցախի հարցում դառնում է Արեւմուտքից զգալի կախուած: Իսկ Արեւմուտքն Արցախի հարցում ներկայում չունի որեւէ ցնցման ծրագիր, այլ հակառակը՝ այստեղ շատ կարեւոր է կայունութիւնը:

Փոխարէնը, օրինակ, Աբխազիայի եւ Ղրիմի ուղղութեամբ ՌԴ համար որոշակի լարուածութիւն առաջացնելու հարցում թուրքիայի նախաձեռնութիւնը Արեւմուտքում կարող է լինել լեգիտիմ:

Այդպիսով, դժուար է ասել, թէ ով է շեղում՝ Ռուսաստանն է շեղում իր հասարակութեան ուշադրութիւնը Ղրիմում եւ Աբխազիայում հնարաւոր տագնապալի նպատակներից, թէ՛ թուրքիան, բայց ակնյայտ է, որ դրանք են Ռուսաստանի դէմ Անգարայի հարուածի երկու հիմնական ուղղութիւնները:

Այստեղ իհարկէ առաջանում է մի վտանգ, որ Մոսկուան գիտակցելով դա, այդ ուղղութեամբ իրական ռիսկեր նշմարելու պարագայում, կարող է փորձ անել թուրքիային շեղել Հայաստանով ու Արցախով: Դա իհարկէ վտանգ է, որից Հայաստանն ու Արցախը պէտք է ապահովագրուեն անյապաղ:

Այլ կերպ ասած, վտանգը այն է, որ թուրքիան կարող է Ռուսաստանին հարուած հասցնելու համար ընտրել հայկական ուղղութիւնը: Վտանգն այն է, որ թուրքիային իր համար հարուածի նպատակները ղրիմեան եւ արեւմտահայկական ուղղութիւնից շեղելու համար հայկական ուղղութեան վրայ կարող է բերել Ռուսաստանը: Խօսքն իհարկէ անպայմանօրէն ուղղակի հարուածի մասին չէ, քանի որ լարուածութիւնը կարող է ունենալ մի շարք այլ դրսեւորումներ:

«ԼՐԱԳԻՐ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամսալստաճառին չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

Ահաբեկչութիւն, Ռի Դէմ ԱԱԾ-ն Անգոր է

ԳԱՌՆԻԿ ԳԵՈՐԳԵԱՆ

«Զկայ վստահութիւն մեր իշխանութիւնների նկատմամբ», - աս մէջբերում է ոչ թէ՛ ընդդիմադիր որեւէ քաղաքական գործչի խօսքից, այլ՝ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան պետ Գորիկ Յակոբեանի՝ այս տարուայ ամրան արած յայտարարութիւնից: Նա այդ մասին խօսել էր՝ անդրադառնալով «Նայիրիտի» աշխատակիցների՝ աշխատավարձերի վճարման պահանջով անցկացուող բողոքի ցույցերին: Այն ժամանակ Գորիկ Յակոբեանի յայտարարութիւնն արժանացաւ բուռն արձագանքի, բոլորն արձանագրեցին, որ վերջապէս մի անգամ բարձրաստիճան պաշտօնեայի, այն էլ՝ ԱԱԾ պետի շուրթերից հնչել է ճշմարտութիւնը: Աւելին, բոլորն արձանագրեցին նաեւ, որ, երբ այդ կարգի ճշմարտութիւնը հնչում է ԱԱԾ պետի կողմից, նշանակում է, որ իրավիճակը լուրջ, չափազանց լուրջ է:

Գորիկ Յակոբեանն այդպիսով, ըստ էութեան, հրապարակաւ զգուշացնում էր իշխանութեանը, որ մարդիկ չեն վստահում իշխանութիւններին:

Դրանից անցել է մի քանի ամիս, բայց Հայաստանում ոչինչ չի փոխուել, պետական կառավարման համակարգը մնացել է նոյնը, նոյն արատաւոր արժէքների կրողը, գրեթէ բոլոր ոլորտներում կոռուպցիան հասնում է հսկայական մակարդակի... Այսինքն՝ մարդիկ այսօր աւելի շատ չեն վստահում իշխանութիւններին, քան Յուլիսին, երբ այդ մասին անհազանգում էր Գորիկ Յակոբեանը, Դեկտեմբերին աւելի շատ չեն վստահելու իշխանութիւններին, քան այսօր, երբ իշխանութիւններին չեն վստահում այն աստիճանի, որ չեն հաւատում ԱԱԾ-ի կողմից վստանգաւոր, չափազանց վստանգաւոր յանցաւոր խմբաւորման բացառացումները: Չեն հաւատում, որ պետութեան անվտանգութիւնն ապահովելու գործառնոյթ ունեցող կառույցը կանխել է իսկապէս հրէշաւոր յանցագործութիւններ: Չեն հաւատում, որովհետեւ այդ նոյն կառույցը տարիներ շարունակ եւ շատ յաճախ զբաղուել է ոչ թէ իր գործառնոյթներով, այլ իշխանութեանն անհաճոյ անձանց զաղտնալսելով, այս կամ այն գործարարին «տանիք կանգնելով», կամ պիղնես յարաբերութիւններ պարզաբանելով:

Չեն հաւատում, որովհետեւ չեն հաւատում ոչ միայն՝ ԱԱԾ-ին, այլ նաեւ՝ Գիւղատնտեսութեանը կամ Սոցախարարութեանը, կառավարութեանն ու Ազգային Ժողովին ամբողջութեամբ, չեն հաւատում նախագահին, արդարադատութեան ողջ համակարգին ու Սահմանադրական դատարանին... մարդիկ դադարել են հաւատալ պետութեանը: Որովհետեւ իշխա-

նութիւնը պետութեանը շատ յաճախ նոյնացրել է իր հետ, որովհետեւ շարժանովները յայտարարել են, որ ամէն ինչ որոշուած է Մելիք-Աղամեանում, որովհետեւ ՀՀԿ-ի կրծքանշանը դարձել է անթոյլատրելիութեան անցատու:

Թէ ինչպիսի հետեւանքներ կարող է ունենալ այն իրավիճակը, որում հասարակութիւնը չի հաւատում բոլորին, այդ թւում՝ ԱԱԾ-ին, երբ վերջինս ահաբեկչական խմբաւորում է վնասագերծել, ով՝ Գորիկ Յակոբեանը շատ լաւ գիտի:

Իսկ դա պետութեան համար պակաս վտանգաւոր չէ, քան ան-

Հասարակութիւնը չի հաւատում բոլորին, այդ թւում՝ ԱԱԾ-ին, երբ վերջինս ահաբեկչական խմբաւորում է վնասագերծել

գամ ամենաուժգին ահաբեկչական ակտը: Բայց, ի տարբերութիւն ահաբեկչական խմբաւորման, հասարակութեան հաւատի ու վստահութեան կորստի «կազմակերպչներին» ԱԱԾ-ն չի կարող վնասագերծել: Քանի որ այդ դէպքում Հայաստանը կը մնայ առանց պետական կառավարման համակարգի, այդ թւում՝ առանց ԱԱԾ-ի: Այս «ահաբեկչութեան» դէմ Հայաստանն անգոր է, որովհետեւ անվտանգութեան մարմինները չեն կարող վնասագերծել ու հասարակութիւնից մեկուսացնել բոլոր նրանց, ում անվտանգութիւնն ապահովում են առաջին հերթին՝ ի հաշիւ պետութեան ու հասարակութեան:

« 168 ԺԱՄ »

ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ
ՊԱՇՏՏՆԱԹԵՐՈ՞
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՍԲԱԳԻՐ՝
SOPH. UNLUY GAZALGETSIS
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Ձեր Ծանուցումները
Վստահեցէ՛ք
«Մասիս»
Շարաքաքերթին
T: (626) 797-7680
F: (626) 797-6863

### ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## «Ձիճուած Խուճըր Օրեր Անց Գործելու Էր» ԱԱԾ-ն քաղաքական ուժերի հետ կապ չի տեսնում

Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԾԾ) հաւաստիացնում է՝ յանցաւոր խմբի բացայայտման եւ վնասազերծման գործողութիւնները որեւէ կերպ կապուած չեն քաղաքական գարգացումների հետ: Այս մասին հրաւիրած ասուլիսում յայտարարեց ԱԱԾ քննչական ծառայութեան պետի տեղակալ Միքայէլ Համբարձումեանը:



Երեսնի մէջ ձերբակալուածներու մօտ յայտնաբերուած զէնքերը

«Քաղաքական ուժերի հետ կապ մենք այս պահի դրութեամբ չենք տեսնում», - լրագրողներին յայտնեց նա:

Համբարձումեանի փոխանցմամբ՝ իրենց յաջողուել է բացայայտել եւ վնասազերծել յանցաւոր խումբ, որը իր գինուածութեան մակարդակով, անդամների քանակով, կազմակերպութեամբ, յանցագործների վտանգաւորութեամբ եւ դաժանութեամբ նախադէպը չի ունեցել Հայաստանի տարածքում: Եղել է դերաբաշխում, իւրաքանչիւր անդամ ունեցել է իր դերն ու պարտականութիւնները: ԱԱԾ-ի տուեալներով՝ խումբը ծրագրել է սպանութիւններ կատարել շատերի կեանքի համար վտանգաւոր եղանակով, գործողութիւններ պէտք է իրականացուէին Հայաստանի տարբեր քաղաքներում, այդ թւում՝ Երեւանում:

Թէ կոնկրետ ում սպանութիւններն էին ծրագրել, ԱԱԾ-ն դեռեւս չի բացայայտում: Ամէն դէպքում Միքայէլ Համբարձումեանը ընդգծեց՝ խմբին վնասազերծել են յանցագործութեան կատարումից ընդամէնը օրեր առաջ:

«Յանցագործութիւնները միտուած են եղել քաղաքացիների, պետական, քաղաքական գործիչների, իշխանութեան առանձին ճիւղերի, ինչպէս նաեւ մարմինների նկատմամբ», - ասաց ԱԱԾ-ի պաշտօնեան:

ԱԱԾ քննչական ծառայութեան պետի տեղակալը խմբի ծրագրած գործողութիւնների վտանգաւորութիւնը ցոյց տալու համար անգամ համեմատութիւն անցկացրեց Նա-

իրի Յունանեանի եւ նրա խմբի կողմից իրականացուած ահաբեկութեան հետ: Նաիրի Յունանեանի յանցախումբը, յիշեցնեք, 1999 թուականի Հոկտեմբերի 27-ին ներխուժեց խորհրդարանի նիստերի դահլիճ եւ զնդակահարեց ութ պետական գործիչների, այդ թւում Ազգային ժողովի նախագահ Կարէն Դեմիրճեանին եւ վարչապետ Վազգէն Սարգսեանին:

«Ես հիմա գոլգահեռ կարող եմ անցկացնել Նաիրի Յունանեանի եւ նրա յանցաւոր խմբի կողմից կատարուածի հետ, եթէ մենք այն դէպքում գործ ունէինք թուով մի քանի անձանց հետ, ովքեր գինուած էին մի քանի ինքնաձիգերով, ապա դուք պատկերացնո՞ւմ էք, թէ ինչ տեղի կ'ունենար այս դէպքում, եթէ խմբին յաջողուէր իրականացնել իրենց մտադրութիւնը, այսինքն՝ գործադրուէին այդ զէնքերը, պայթիւցիկ նիւթերը, նունակները: Պատկերացրէ՛ք՝ ինչ յաջողութիւն կը լինէր, եթէ Նաիրի Յունանեանի խմբին յանցագործութիւնը կատարելուց երեք օր առաջ, ինչը մեր դէպքում հիմա տեղի ունեցաւ, կարողանայինք բացայայտել»:

Ի դէպ, ԱԱԾ քննչական ծառայութեան պետի տեղակալը նշեց, որ յանցաւոր խումբը տասնեակ հազարաւոր դուրսերի ֆինանսաւորում է ստացել եւ այժմ իրենք փորձում են պարզել գումարների ծագման աղբիւրը:

«Գումարները տրուել են Հայաստանի Հանրապետութեան տարածքում, սակայն գումարների ստացման, ծագման աղբիւրը մենք դեռ պէտք է պարզենք», - ասաց Համբարձումեանը:

## Րաֆֆի Յովհաննիսեանն Ընդունել է Մի Խուճըր Դեսպանների

«Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը Նոյեմբերի 30-ին իր գրասենեակում ընդունեց մի խումբ դեսպանների եւ այլ դիւանագետների:

«Ժառանգութիւն» կուսակցութեան լրատուական ծառայութիւնից յայտնում են, թէ Յովհաննիսեանը Հանրապետութեան ներկայ իրավիճակի, Հայաստանի եւ տարածաշրջանի քաղաքական գարգացումների իր տեսլականը հակիրճ ներկայացրեց Եւրոպական Միութեան դեսպան Պյոտր Սվիտալսկուն, ԵԱՀԿ դեսպան Անդրէյ Սորոկինին, Գերմանիայի դեսպան Բերնարդ Մաթիաս Քիսլերին, Մեծ Բրիտանիայի դեսպան Ջուզեպե Մարտարեթի, Ֆարուսի Ներկայ Պարտադրութիւնի, ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսին, Իտալիայի դեսպան Ջիովանի Ռի-

չիուլիին, Լեհաստանի դեսպան Եթի Մարեկ Նովակովսկուն, Շվեյցարիայի դեսպան Լուկաս Գասսերին, Չեխիայի դեսպան Պետր Միկիսկային եւ Ճապոնիայի դեսպանի խորհրդական Քենիչիրո Սասամիին: Բազմաշերտ տեսակէտների ու վերլուծութիւնների փոխանակում տեղի ունեցաւ կլոր սեղանի շուրջ կայացած քննարկման ժամանակ:

Նոյն օրը Րաֆֆի Յովհաննիսեանը հանդիպել է իրան իսլամական Հանրապետութեան դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադիին:

Քննարկումների ընթացքում Յովհաննիսեանին ուղեկցում էին «Նոր Հայաստան» ճակատի ներկայացուցիչներ Գարեգին Չուգասովեանը, Արմէն Մարտիրոսեանը եւ Յովսէփ Խուրշուդեանը:

## Հայաստանում Ընդդիմութեան Ֆակուլտետ Չկայ. ՄԴՀԿ-ն Ասում է «Այո»

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը կողմ է սահմանադրական փոփոխութիւններին: «Սահմանադրական բարեփոխումների հեռանկարները» խորագրով խորհրդաժողովին ՄԴՀԿ ատենապետ Նարեկ Գալստեանը նշեց այն կէտերը, որոնք ստիպում են նրանց Դեկտեմբերի 6-ին ասել «Այո».



«Այո»-ի քարտզուտեան ՄԴՀԿ բոլուցիկները

«Խորհրդարանական կառավարման համակարգը ժողովրդավարութեան ամենաբարձր դրսեւորումն է: Հայաստանի քաղաքական համակարգի դեգրադացուածութեան, կուսակցութիւնների հանդէպ անվստահութեան, ապատիայի պայմաններում միայն խորհրդարանական կառավարման համակարգն է, որ կարող է երկրում վերացնել վստահութիւն չվայելող ինստիտուտները»:

ՄԴՀԿ ատենապետը չի ընդունում «ոչ»-ականների դիտարկումը, թէ սահմանադրական փոփոխութիւնները իշխանութեան վերարտադրութեան համար են. «Այս հանգամանքը մեզ համար այնքան անընդունելի է, որքան որ իրենց համար է անընդունելի արտագաղթը, օլիգարխիան, մենաշնորհը, սոցիալական անարդարութիւնները, տասնանգամ աւելի շատ դրանք մեզ համար են անընդունելի: Այնպէս չէ,

որ իրենք աւելի ընդդիմադիր են, քան միւսները: Հայաստանում ընդդիմութեան ֆակուլտետ չկայ, ընդդիմադիր դիպլոմ որեւէ հաստատութեան կողմից չի բաժանուած: Սահմանադրական փոփոխութիւնների շուրջ քննարկումները պէտք է վեր լինեն այս ամենից»:

Նարեկ Գալստեանը յիշեցնում է, որ աշխարհի ցանկացած երկրի ցանկացած իշխանութիւն ցանկանում է վերարտադրուել, դա տարրական քաղաքագիտական նորմ է: Բայց եթէ մեր իշխանութիւնները վերարտադրութեան ցանկութիւն ունենային, ապա ներկայիս սահմանադրութեամբ էլ դա կ'անէին. «Ի՞նչ պէտք է նրանց խանգարէր դա անել, նախագահը կարող էր ընտրուել վարչապետ, ապա կրկին առաջադրուել որպէս նախագահ»:

## «Նոր Սահմանադրութեամբ Հնարաւոր Կը Լինի Իշխանութեան Անցնցում Փոխանցում»

Սերժ Սարգսեանը յայտարարել է՝ Սահմանադրութեան փոփոխութիւնից յետոյ չի հաւակնելու, նախագահի, երկրի վարչապետի, Ազգային ժողովի նախագահի պաշտօններին: Այս մասին Դեկտեմբերի 1-ին, «Այո եւ ոչ» ռեալիթի շոուի շրջանակում քաղաքացիների հետ հանդիպման ժամանակ յայտարարել է «Այո»-ի ներկայացուցիչ Սամուէլ Ֆարմանեանը:

«Մեր քաղաքական ընդդիմախօսները, յատկապէս Հայ ազգային կոնգրէսը՝ պարոն Տէր-Պետրոսեանի զլխաւորութեամբ, ասում էին, որ այս փոփոխութեամբ Սերժ Սարգսեանը դառնալու է ԱԺ նախագահ եւ շարունակելու է մնալ իշխանութեան ղեկին: Դրանից յետոյ, երբ Սահմանադրութեան տեքստը բաժանուեց ու արձանագրուեց, որ ԱԺ նախագահը եւս կարող է հետ կանչուել այնքան ձայնով, որքան ընտրուել է, ու մէկ այլ առիթով Սերժ Սարգսեանն էլ ասաց՝ մէկ անձը երկու անգամից աւել չպէտք է յաւակնի ՀՀ-ին ղեկավարելու դերին, քաղաքական հակառակորդները մէջտեղ են բերել նոր «համոզիչ» փաստարկ: Այն է, թէ նախագահը կարող է մնալ ՀՀ ղեկավար, ՀՀԿ-ն էլ ստանայ մեծամասնութիւն ու կուսակցութեան գրասենեակից շարունակի իշխելը», - ասել է ՀՀԿ խմբակցութեան պատգամաւորը:

Վերջինս յիշեցրել է, որ ՀՀ ողջ պատմութեան մէջ չի եղել դէպք, որ որեւէ կուսակցութիւն ունենայ 51 տոկոս քուէ առանց մեծամասնական պատգամաւորների: Փոփոխութեամբ անցում է կատարուելու ամբողջա-



«Այո»-ի ներկայացուցիչ պատգամաւոր Սամուէլ Ֆարմանեան

կան համամասնական ընտրակարգին, ինչը իշխանափոխութեան հնարաւորութիւն է ընձեռում:

ՀՀ ողջ պատմութեան ընթացքում չի եղել որեւէ քաղաքական ուժ, որ 50 տոկոսից աւել քուէ ստանայ ժողովրդի կողմից առաւել եւս այսօրուայ սոցիալ-տնտեսական բարդ պայմաններում:

«Նոր Սահմանադրութիւնը եթէ ընդունուի, առաջին անգամ մեր պատմութեան մէջ հնարաւորութիւն է տրուելու, որպէսզի ՀՀ-ում խաղաղ եղանակով առանց ցնցումների, արեան ու թշնամանքի տեղի ունենայ իշխանութեան փոխանցում մի անձից միւսին», - նշել է «Այո»-ի ներկայացուցիչը՝ յաւելելով, որ գործող Սահմանադրութիւնը եւ դրա նախորդը նման հնարաւորութիւն թոյլ չեն տուել:

«Դրա վառ ապացոյցը այն պատմութիւնն է, որն անցել ենք 91 թուից սկսած: Յանկացած իշխանութիւն վերարտադրուել է՝ չնայած մէկը մէկից ուժեղ ընդդիմութեանը», - ասել է Սամուէլ Ֆարմանեանը:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանի Նախագահը Մասնակցել է «Կլիմայի Փոփոխութեան» Համաժողովին



Նախագահ Սերժ Սարգսյանը կը հետեւի «Կլիմայի փոփոխութեան» համաժողովին

Հայաստան Նախագահ Սերժ Սարգսյանը Նոյեմբեր 30-ին Փարիզում մասնակցել է Միաձուլուած Ազգերի Կազմակերպութեան (ՄԱԿ) «Կլիմայի փոփոխութեան մասին» շրջանակային կոնֆերանսի կողմ պետութիւնների 21-րդ համաժողովին, որի նախագահութիւնն ստանձնել է Ֆրանսիան:

Հայաստանի նախագահի աշխատակազմի հասարակայնութեան եւ տեղեկատուութեան միջոցների հետ կապերի վարչութեան փոխանցմամբ՝ համաժողովին մասնակցել են 150 պետութիւնների եւ կառավարութիւնների ղեկավարներ, հազարաւոր պատուիրակներ:

Բարձր մակարդակի փարիզեան համաժողովի պատուիրակութիւնները մինչ օրակարգին անցնելը մէկ ընդհանուր շարժում են Նոյեմբերի 13-ին Փարիզում տեղի ունեցած անաբեկչական գործողութիւնների գոհերի յիշատակը:

Համաժողովի բացման իրենց խօսքում Ֆրանսիայի նախագահ

Ֆրանսուա Օլանդը, համաժողովը նախագահող Ֆրանսիայի արտգործնախարար Լորան Ֆաբիուսը, ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղար Բան Կի-Մունը, Միացեալ Թագաւորութեան արքայազն Չարլզը եւ հետագայում այլ ելույթ ունեցողներն ընդգծել են կլիմայի փոփոխութեան մասին 21-րդ համաժողովի կարեւորութիւնը Երկիր մոլորակի եւ ամբողջ մարդկութեան ապագայի համար:

«Բանախօսները համակարծիք են եղել, որ Դեկտեմբերի 11-ին համաժողովի ամփոփիչ համաձայնագիրը միայն բարի մտադրութիւնների արձանագրութիւն չպէտք է լինի. երկրների ղեկավարներն իրենց ելույթներով քաղաքական յստակ եւ ուժեղ ազդակներ պէտք է հաղորդեն, որպէսզի Երկրի վրայ մարդկութեան անվտանգ ապագան ալլընտրանք չունենայ», - ասուած է հաղորդագրութիւնում:

Նախագահ Սերժ Սարգսյանը հանդէս է եկել ելույթով:

Անցնող Մէկ Ամսուայ Ընթացքում Շփման Գծում Լարուածութիւնն Թուլացել է



Անցնող մէկ ամսուայ ընթացքում շփման գծում լարուածութիւնն ընդհանուր առմամբ թուլացել է: Այդ մասին ասել է Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը՝ Նոյեմբերի 30-ին ՀՀ ՊՆ վարչական համալիրում կայացած հերթական աշխատանքային խորհրդակցութեանը՝ նուիրուած 2015 թ. Նոյեմբեր ամսուայ ընթացքում զինուած ուժերում իրականացուած ռազմավարական բնոյթի միջոցառումների, դրանց արդիւնքների եւ առաջիկայ անելիքների քննարկմանը:

Ողջունելով խորհրդակցութեան մասնակիցներին՝ պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը խօսել է տարէսկզբից մինչ օրս ազգային բանակում միասնական եւ հետեւողական աշխատանքի արդիւնքում արձանագրուած ձեռքբերումների ու դրական առաջընթացի մասին: Որպէս նախորդ ամիսների շարունակութիւն՝ Սէյրան Օհանեանը նկատել է, որ հաշուետու ժամանահատուածում եւս պատշաճ կերպով կատարուել են ՁՈւ պատրաստութեան պլանով նախատեսուած

Սպանուած Յայտնի Քուրդ Փաստաբանը Թուրքիային Կոչ էր Անում Ճանաչել Հայոց Ցեղասպանութիւնը

Դիարբեքի-րի Սուրի շրջանում Նոյեմբերի 28-ին մամուլի ասուլիսի աւարտին լրագրողների աչքի առաջ սպանուած Դիարբեքիի փաստաբանների պալատի նախագահ Թահիր էլչին ամէն տարի Ապրիլի 24-ին մասնակցել է Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի միջոցառումներին:



Թահիր էլչի (ճախին) Ապրիլ 24-ի առթիւ տեղի առթիւ ունեցած արարողութեան ընթացքին

Թահիր էլչին Ցեղասպանութեան տարեկիցին նուիրուած միջոցառումների ժամանակ աչքի է ընկել համարձակ յայտարարութիւններով: Նա դատապարտել է Օսմանեան Թուրքիայում հայերի հանդէպ իրականացուած ցեղասպանութիւնը՝ իշխանութիւններին կոչ անելով առերեսուել իրականութեան հետ:

Վերջին 2 տարուայ մէջ Ապրիլի 24-ին Թահիր էլչին Դիարբեքիում է մասնակցել Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակման միջոցառումներին: Իսկ 2013-ին մասնակցել Դիարբեքիում կոտորուած հայերի յիշատակին նուիրուած յուշարձանի բացմանը:

Ռուսաստանի Հայերի Միութիւնը Կարծիք է Յայտնել Ցեղասպանութեան Ժխտումը Քրեականացնող Օրինագծի Մասին

Ռուսաստանի Հայերի Միութիւնը պաշտպանում է Օսմանեան Թուրքիայում Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրեականացնելու մասին օրինագիծը եւ ինդրում է Պետդումայի խօսնակին եւ Դումայի 4 խմբակցութիւններին պաշտպանել փաստաթուղթը: «Ռուսաստանի Հայերի Միութիւնը ամբողջովին աջակցում է այդ օրինագծի ընդունմանը: Մենք կարծում ենք, որ այն բխում է ՌԴ անվտանգութեան ամրապնդման շահերից եւ կոչ ենք անում պաշտպանել նման կարեւոր նախաձեռնութիւնը:

գահ Արա Աբրահամեանի ուղերձում:

Օրինագծի համաձայն, եթէ Ցեղասպանութիւնը հերքում է հրատարակու, ապա նման իրաւախտման համար նախատեսուած է մինչեւ 300 հազար ռուբլի կամ մինչեւ 2 տարի ժամկէտով իրաւախտի աշխատավարձի կամ այլ եկամուտի չափով տուգանք կամ մինչեւ 3 ժամկէտով հարկադիր աշխատանք կամ ազատազրկում նոյն ժամկէտով:

Եթէ նոյն յանցանքը կատարում է իր պաշտօնական դիրքը կամ լրատուամիջոցներն օգտագործող անձը, ապա տուգանքի չափը կազմում է 100 հազարից մինչեւ 500 հազար ռուբլի կամ 1-ից մինչեւ 3 տարի ժամկէտով իրաւախտի աշխատավարձի կամ այլ եկամուտի չափով կամ մինչեւ 5 ժամկէտով հարկադիր աշխատանք կամ ազատազրկում նոյն ժամկէտով՝ զրկուելով մինչեւ 3 տարի ժամկէտով կոնկրետ գործունէութիւն ծաւալելու իրաւունքից:

Անցեալ շաբաթ «Սպարավեղլիվայա Ռոսիա»-ի առաջնորդներ Սերգէյ Միրոնովն ու Նիկոլայ Լեւիչեւը Պետդումայում Արեւմտեան Հայաստանում եւ Օսմանեան Թուրքիայում 1915-1922 թթ. Հայոց ցեղասպանութեան ժխտման համար Թուրքիային պատասխանատուութեան կոչելու օրինագիծ էին ներկայացրել:

ԿԱՐԶՈՒ ՄՐԱԸ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ԸՄՍԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸՄՍԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104 ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

### Արա Գիւլերը հրաժարուել է իր արխիւը թուրքական >>Դողուշ<< Յոլդիհնգին փոխանցելու մտադրութիւնից



«Ջուճհուրիյէթ» թերթի հարցումամբ՝ Գիւլերը չեղեալ է յայտարարել նոյեմբերի 18-ին ընկերութեան հետ կնքած պայմանագիրը: Ըստ կայացուած համաձայնութեան՝ Գիւլերի 70 տարուայ աշխատանքը ընդգրկող հսկայական արխիւը, որը գնահատուել է 3 մլն եւրօ, ինչպէս նաեւ Ստամբուլի կենտրոնում գտնուող «Արա» սրճարանի շէնքը եւ լուսանկարչական սարքերի հաւաքածուն անցնելու էր «Դողուշ» հոլդինգին: Փոխարէնը Գիւլերը, ապա նաեւ նրա ժառանգները ամսական 50 հազար թուրքական լիրա էին ստանալու ընկերութիւնից: Սակայն երէկ յայտնի դարձաւ, որ Գիւլերը սեփական նախաձեռնութեամբ խզել է աւելի վաղ կնքուած պայմանագիրը՝ պատճառաբանելով, որ ցանկանում է իր անուանով թանգարան հիմնել եւ այդպիսով ապրեցնել իր լուսանկարները:

«Դողուշ» հոլդինգը ղեկավարում է իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեանը մօտ կանգնած Ֆերիդ Շահանբը: Հաւանական է, որ այս հանգամանքը եւս դեր է խաղացել, որպէսզի լուսանկարիչը փոխի իր որոշումը: Միջազգային բազմաթիւ

մրցանակների արժանացած 87-ամեայ Արա Գիւլերին անուանում են «Ստամբուլի աչք», «ակնթարթի որսորդ», «100-ամեակի լաւագոյն լուսանկարիչ», «անգերազանցելի ֆոտոպատմաբան»:

Նա իր լուսանկարներում պատկերել է հին ու նոր Ստամբուլը, Արեւմտեան Հայաստանի քաղաքներն ու յուշարձանները: Գիւլերի ֆոտոխցիկը անմահացրել է այնպիսի նշանաւոր դէմքերի, ինչպիսիք են Ուիլիամ Չերչիլը, Պաբլօ Պիկասոն, Սալվադոր Դալին, Սոֆի Լօրէնը, Վիլյամ Մարոնանը, Սերգէյ Փարաջանովը:

2013 թուականին Արա Գիւլերը Երեւանում էր: Ազգային պատկերասրահում «Բարեւ ձեզ» խորագրով ցուցահանդէսի ժամանակ ներկայացուցեցին աշխարհահռչակ լուսանկարչի շուրջ 100 աշխատանք, որոնք նա թողեց Հայաստանում: Այն ժամանակ Գիւլերը ցանկուկութիւն էր յայտնել թանգարան ունենալ Հայաստանում, որին կը փոխանցուէին հսկայական թեմատիկայով նրա լուսանկարները, սակայն անուանի արուեստագէտի այս ցանկութիւնը ի կատար ածելու հարցում մինչ օրս որեւէ քայլ չի ձեռնարկուել:

### Սահմանադրական Հանրահաւաքի Նախօրեակին

Շարունակուած էջ 1-էն

ցուց, որ ընդգրկմադիր երկու ճակատներուն միջեւ տարածայնութիւններ չկան:

«Քարոզարշաւի սկզբից ի վեր իշխանութիւնները տարածում են մի թէք, թէ իբրեւ «Ոչ»-ի շարժումը պառակտուած է եւ միասնականութիւն չի լինելու այդ շարժման մէջ: Այս խօսքերում միայն մէկ ճշմարտութիւն կայ, որ «Ոչ»-ի շարժումը դարձել է բազմազան, տարածուել է, եւ հիմա ողջ հայ ժողովուրդն է «ոչ» ասելու այս իշխանութիւններին», - յայտարարեց Կարապետեանը. - «Մեր միասնականութեանը՝ Սերժ Սարգսեանին եւ ռեժիմին «ոչ» ասելու, ոչ մի բան չի խանգարում, եւ իմ ներկայութիւնն այստեղ, ուղերձով ձեզ դիմելը դրա վկայութիւնն է»:

Հանդէս եկաւ «Նոր Հայաստան» շարժման առաջնորդ Ժիրայր Սէֆիրեանը: Ան յայտարարեց, որ յեղափոխութիւնը սկսած է, եւ անուաններով հրապարակ հրաւիրեց տարբեր ընդգրկմադիր գործիչներուն՝ հնչեցնելով, մասնաւորապէս, Նիկոլ Փաշինեանի եւ

Ստեփան Դեմիրճեանի անունները:

«Այս հրապարակից առաջիկայ ժամերին, եւ եթէ պէտք լինի՝ առաջիկայ օրերին, ոչ ոք չի հեռանալու, միայն աւելանալու ենք», - յայտարարեց Սէֆիրեանը, - «Երկու տարբերակ գոյութիւն ունի. մէկը այն, որ պիտի սպասենք մի շաբաթ եւ գնանք բուէրկութեան, յետոյ տեսնենք արդիւնքը ինչ է լինելու, յետոյ կողմնորոշուենք, երկրորդ տարբերակը՝ այս պահին սկսում ենք ռեժիմի հեռացումը»:

Հանրահաւաքի աւարտին «Նոր Հայաստանը» երթով անցաւ Երեւանի կենտրոնով եւ հասաւ Մելիք-Աղամեան փողոց, ուր կը գտնուի իշխող՝ Հանրապետական Կուսակցութեան գրասենեակը: Հոն «Ժառանգութեան» առաջնորդ Բաֆֆի Յովհաննիսեան փորձեց ծաղկեփունջ դնել ՀՀԿ գրասենեակի մօտ, սակայն շէնքը շրջափակած ոստիկանները թոյլ չտուին: Սկսաւ հրմշտուք ցուցարարներու եւ ոստիկաններու միջեւ, ապա, ցուցարարները նահանջեցին:

Յուցարարները վերադառնալով Ազատութեան հրապարակ սկսան շուրջօրեայ նստացոյց:

### Ոչ եւս է Ջարեհ Խրախունին

27 Նոյեմբեր, 2015-ին իր մահականացուն կնքեց 89 ամեայ պոլսահայ վաստակաւոր բանաստեղծ Ջարեհ Խրախունին:

Ազատատենչ ոգիով տոգորուած բանաստեղծ էր Խրախունի: Դեռ վերջերս, իր «Ստուեր եւ Արձագանգ» ժողովածուն կ'ընթերցէի եւ հայու ճակատագրին համար տառապողի մը կերպարը կ'ուրուագծուէր մտապատկերիս դիմաց: Բանաստեղծը հայոց պատմութիւնը վերակոչելով, իր երեւակայութեամբ մատնանիչ կ'ընէ թէ... օտարին նուաճողական կեցուածքը եւ թէ՛ հայու բախտն ու պատմական հերոսներուն սխալները: Տեղ մը հեզմանքով կը դիմէ հայ ժողովուրդի զաւակներուն ըսելով. «Ապրի հայր, որ գիտէ լուել միայն - օտարին դիմաց Որ գիտէ կրել միայն - օտարին համար մինչդեռ անոնք մէկ բառ գիտեն Մէկ բառ կ'ուզեն - տիրել միայն»: Ո՞վ չի շէր դպրոցական գրասեղան-ներուն ետին նստած ու յաճախ կրկնած իր «Այս Ծառը Սուրբ» հայ ժողովուրդի անմահութիւնը խորհրդանշող բանաստեղծութիւնը: Ծառ տնկեցէք եղբայրներ կաղնի, սօսի, եղեւին, Պարսէպին մէջ - դաշտերուն Լեւան վրայ - ժայռերուն քարքարուտին ապառաժին Ձեր թաղարին սովորական կամ սեղանին ամէնօրեայ Ծառ տնկեցէք - պիտի բունէ անպայման - Այս ծառը սուրբ պիտի կանգնի պիտի աճի ուռճանայ Պիտի երկինք բարձրանայ Ամէն առտու այգբայցին ստուերն անոր պիտի հասնի մեծ լերան Ծուք պիտի տայ արեւափառ ոսկեծածան հանդերուն Հազար բարեւ ու բիւր բարիք պիտի առնէ ամպերէն որոնք կու գան աշխարհի չորս ծագերէն ու կը շոյեն սաղարթն անոր մշտադալար - ալեւոր... Օ տնկեցէք Ամուր ձեռքով խնամեցէք զարդարեցէք պաշտպանեցէք պաշտեցէք Ազատութեան ծառն է այս ...: Իր գրչակից Ջահրատին նման սովորական աւարակաները մարմնաւորելու, անձնաւորելու ու կեանք ու ոգի ներշնչելու կարողականութեամբ ու արուեստի նուրբ ճաշակով կը ստեղծէ այլաբանական բանաստեղծութիւններ:

Ահա տեսէք սովորական ծխամորձին դիմելով ինչպիսի խորունկ այլաբանական մտքեր կը



հարդրէ բանաստեղծը: Երկուքիս ալ Փայտին տեսակը լաւ է - Լաւ մը տաշուած նրբացած Գոյն Չնարակ անթերի Ոչ այնքան մեծ, ոչ այնքան փոքր Լայն չէ նեղ չէ - կատարեալ Ինչ որ պէտք է վերջապէս... Բայց նորէն ալ Ատեն ատեն կը բարկանամ Կը նախանձիմ, կ'անհիծեմ Ծխամորձիս չա՛փ ալ չկամ ես - կ'ըսեմ Երբ կը տեսնեմ թէ չ'այրիւր Իր մէջ վառող կրակէն: Քանի կաղանդը կը մօտենայ կ'ուզեմ յիշատակել հոս նաեւ իր բարեմաղթանք - Երգը Կաղանդի Մեծ ու պզտիկ մանչ ու աղջիկ - ամէն մարդ Հոգին լեցուած աչքերն յորդած ուրախութեան ծովերով Եթէ վազէ՛ թեւաբաց Ողջագուրէ ո՛վ որ ելլէ իր դիմաց Ջայն համբուրէ սիրաբաժ - տօնէ՛ այդ օրն անմոռաց ու կանչէ. Ազատութիւն, Խաղաղութիւն Ուրախութիւն եղբայրներ Օ այն ատեն - իրաւ որ Կաղանդ կ'ըլլայ ամէն մարդու ամէն օր:

Խաղաղութեան, ազատութեան, ուրախութեան ջատագով սիրելի՛ բանաստեղծ, դուն որ «Հոգեհանգիստ» երգեցիր բոլոր անոնց, որ գերեզման չունեցան, Աղօթք ու արցունք բաշխեցիր «բոլոր անոնց որ աշխարհով մէկ ցրուած լքուած մնացին» Խաչ ու խորան եղար այն «հաւատքին համար, որ աւերակ հին տաճար մ'է դեռ կանգուն...» Անդորրութիւն բաշխող սիրելի՛ վարպետ թող հողը թեթեւ գայ վրայ եւ հոգիդ խաղաղութեան մէջ ննջէ:

### Կարօ Փայլան Թուրքիոյ Խորհրդարանին Մէջ

Շարունակուած էջ 1-էն

մէջ Օկիւն Սամասթին ճանապարհ կը դնէին այս երկրի ոստիկանութեան եւ անվտանգութեան վարչութեան հետախուզական բաժինի աշխատակիցները: Իսկ Սթամպուլի մէջ հետախուզական բաժինի միւս աշխատակիցները անոր դիմաւորեցին, իսկ սպանութեան օրը անգամ ուղեկցեցան», - իր ելոյթին մէջ նշած է Փայլանը՝ ըսելով, որ իրենց պարտականութիւնն է երկիրը մաքրել այն աղտէն, որ կայ արդէն Ցտարիէ: «Եթէ մենք ատիկա չընենք, յանցագործութիւնները պիտի կրկնուին: Տինքի սպանութիւնը կոծկելու պատճառով է, որ այսօր յանցագործութիւնը կրկնուեցաւ, եւ այսօր այլ «խաղաղութեան

աղաւնի»՝ Թահիր Էլչին սպանուեցաւ: Էլչին կը հաւատար խաղաղութեան, եղբայրութեան, բանակցութիւններուն եւ ժողովրդավարութեան», - նշած է Փայլանը:

Ան խստօրէն դատապարտած է նաեւ օրեր առաջ ձերբակալուած երկու լրագրողներ՝ ձան Տիւնտարի եւ Էրտեմ Կիւլի ձերբակալութեան փաստը:

«Դժբախտաբար, մեր պետական պաշտօնեաները արդէն 100 տարի է, ինչ շատ յանցագործութիւններու անմիջական մասնակիցն են, սակայն անոնցմէ եւս ոչ մէկը ատոր համար պատասխանատուութիւն չէ կրած: Քանի յանցագործութիւնները չեն պատժուիր, անոնք պիտի կրկնուին», - ըսած է Փայլան:

### ՀԱԿԱԴՐՈՒԹԵԱՆՑ ԵՐԿԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ

#### ՅԱՐՈՒԹՅՆ ԴԱԿՈՒԹԵԱՆ

Յուզիսի առաջին երկու շաբաթներուն, վեցերորդ անգամ ըլլալով գտնուեցանք հայրենի հողի վրայ: Լոս Անճելըս մեր վերադարձին, չուզեցինք անմիջապէս թուղթին յանձնել մեր մտածումները, այլ նախընտրեցինք որ ժամանակ անցնի, որպէսզի անմիջական ու զգացական տպաւորութիւններու ազդեցութիւնը տեղ տայ իրատես խորհրդածութեանց: Դժբախտաբար առաջին տեսակի օրինակներու շատ կը հանդիպինք, որոնք յաւուր պատշաճի խօսքեր ըլլալէ անդին, ապակողմնորոշիչ եւ նուազ փնտրելի վնասակար ալ են, որովհետեւ մեր ուշադրութիւնը կը վրիպեցնեն բուն հարցերէն: Մանաւանդ, երբ ի մտի կ'ունենանք, որ ազգովին կը բոլորենք բախտորոշ ժամանակաշրջան մը, որ պէտք է ստիպէ բոլորիս, ըլլալ զուսպ, անկեղծ եւ անշահախնդիր ու հետեւաբար ծաւալել միայն ու միայն ազգօգուտ գործունէութիւն: Մեր միտքը աւելի պարզաբանելու համար, խօսինք օրինակներով, որոնց անձնապէս ականատես եղանք:

Նկատելով որ մեր այս անգամուան ացեցութիւնը կապուած էր Համաշխարհային Հայ Բժշկական Խորհուրդի համագումարին կողակիցիս մասնակցութեան, ներկայ գտնուեցանք Օփերայի շէնքին մէջ կայացած բացման հանդիսութեան: Պաշտօնական ելոյթներու շարքին, ելոյթ ունեցաւ Սփիւռքի նախարարուհի Տիկին Հրանտշ Թակոբեան: Իր խանդավառ խօսքին մէջ ըսաւ, որ եթէ թուրքը իմանար, որ հարիւր տարիներ ետք մենք տասը միլիոն պիտի դառնայինք, որ մենք երկու հանրապետութիւններ պիտի ունենայինք, ապա հաւանաբար ցեղասպանութիւն չգործէր:

Ապշած էինք անհասկնալի եւ իմաստագործիկ այդ արտայայտութիւնէն: Ի՞նչ ըսել կ'ուզէր նախարարուհին:

Արդեօ՞ք վայրկեանի խանդավառութիւնէն կլանուած, ըսաւ խօսքեր, որոնք ականջի դիրք կու գային եւ զգացական էին: Բայց ի վերջոյ անիմաստ էին ու վայել չէին նախարարի պատասխանատու պաշտօն զբաղեցնող ղեկավարի, որմէ կ'ակնկալուէր պետական մտածողութիւն եւ ոչ թէ ամբոխավարութիւն:

Դժբախտաբար այս երկրորդին աւելի յաճախ կը հանդիպինք, քան՝ առաջինին: Կ'արտասանուին խօսքեր ու կ'ըլլան խոստումներ,

որոնք կը մնան օդին մէջ եւ որոնց արդիւնքը կ'ըլլայ համատարած հիասթափութիւն ու անտարբերութիւն:

Վերեւ նշուած համագումարի ընթացքին հնչեցին կարծիքներ ու առաջարկներ, որ բժշկութեան ոլորտը այն հազուագիւտ գործօններէն մին է, որ կրնայ նպաստել շրջափակուած Հայաստանի զարգացման ու ամրակայման: Բայց ի՞նչ սերտուած եւ գործնական քայլեր կ'առնուին այդ ուղղութեամբ: Չխօսինք սփիւռքէն եկած միլիոնաւոր տղարներու հասնող նուիրատուութեանց եւ սարքաւորումներու «սեփականաշնորհման» մասին: Չխօսինք մեծաքանակ, բայց ոչ անպայման մասնագիտական բարձր որակի բժիշկներու արտադրման մասին: Տանք օրինակը Գալիֆօրնիոյ համալսարաններէն մէկուն բուժքոյրերու պատրաստման ծրագրին: Այդ ծրագիրը 1995-ին ներկայացուցաւ Հայաստանի Բժշկական Համալսարանի ղեկավարութեան, ծրագրի հեղինակին կողմէ: Նոյն ծրագիրը ներկայացուցաւ Օմանի պետական համալսարանին աւելի քան տասնամեակ մը ետք: Օմանինը հակայաքայլ կը յառաջդրէմէ, մինչ Հայաստանինը փակուած կը մնայ դարակներու մէջ, ինչո՞ւ: Որովհետեւ բուժքոյրերու յառաջդրմութիւնը կրնայ «վնասել» բժիշկներու գործին: Որովհետեւ կարգ մը մենաշնորհեալ մարդիկ, կառչած իրենց պաշտօններուն, բայց անասակ քայլ պահելու դարուս զարգացումներուն, կ'արգելակեն ամէն յառաջխաղացք: Այս մտածելակերպով բժշկութեան ոլորտը պիտի զարգանայ Հայաստանի մէջ:

Լսած էինք «Լոյս» հիմնադրամի կրթական յանդուգն եւ ստեղծարար առաքելութեան մասին: Հիմք ունենալով այն համոզումը, որ «համաշխարհային գիտելիքահենք տնտեսութեան պայմաններում Հայաստանը պէտք է ապահովի իր հզօր ներկայութիւնն աշխարհի լաւագոյն մտածողների եւ նորարարների շարքում՝ դրսեւորելով առաջատար երկրներին համընթաց զարգացում եւ մասնակցութիւն», «Լոյսը» կրթաթոշակ կը շնորհէ աշխարհի լաւագոյն տասը համալսարաններու մէջ սովորող ծագումով հայ ուսանողներու, որպէսզի «Կրթութեան միջոցով արտաքին աշխարհին կապուած եւ ձեռք բերած գիտելիքը ներսում կիրառելով՝ նպաստէ այսօրուան Հայաստանի տնտեսական, հասարակական եւ մշակութ-

թային զարգացմանը»: Երեւանի մէջ մեր ներկայութիւնը զուգարկապէս «Լոյսի» «Ոգեշնչման Օր»ուան միջոցառմանը, որու ընթացքին ելոյթ ունեցան զանազան անձնաւորութիւններ՝ «Լոյսի» պատասխանատուներ, կրթաթոշակաւուներ, շրջանաւարտներ, ՀԲԸՄ-ի եւ «Այբ» դպրոցի վարչականներ, ինչպէս նաեւ Ջուլիցերիոյ եւ Հնդկաստանի ղեկավարները Հայաստանի մէջ: Շատ բովանդակալից այդ ելոյթներու շարքին էր նաեւ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար եւ «Լոյսի» խորհուրդի անդամ՝ Պրն. Վիգէն Սարգսեանի ելոյթը՝ «Հզօր գաղափարները՝ որպէս միասնականութեան ու զարգացման հիմնաքարեր» իմաստալից խորագրով: Մասնակցելով իր ելոյթի աւարտին կայացած հարց-պատասխանի բաժնին, դրուատեցինք «Լոյսի» առաքելութիւնն ու նշանաբանը՝ «Սովորել, Գործել, Համաստեղծել» ու հարց տուինք, որ ի՞նչու համար սովորելու եւ գործելու մէջ յաջողութիւններ արձանագրող հայը կը թերանայ համաստեղծելու բնագաւառին մէջ: Որպէս թարմ օրինակ, նշեցինք անցեալ տարի վան կատարած մեր այցը եւ ականատես դառնալը նորակառուց բարձրաշարի շէնքերու, որոնք 2-3 տարուան ընթացքին կառուցուած էին, ապահով երդիք տալու վանի երկրաշարժի աղէտեալներուն, մինչ մենք ազգովին չենք յաջողած Սպիտակի երկրաշարժէն 27 տարիներ ետք նոյնը ընել: Պրն. Սարգսեան մեզի գարմացուց իր պատասխանով: Նախ այլանեց մեզ, որ այդ ոգեւորիչ միջոցառման ընթացքին մենք ջլատիչ արտայայտութիւն ունեցանք, որ ժխտական ազդեցութիւն կը ձգէր դրականօրէն տրամադրուած ներկաներուն վրայ: Երկրորդ՝ հարց տուաւ, որ ե՞րբ վերջին անգամ Գիւմրի գտնուած ենք ու երբ «երկու տարի առաջ» պատասխանեցինք, յարմար տեսաւ չչարունակել իր միտքը: Կրնաք երեւակայել, որ ինչէր կրնար ըսել եթէ մեր պատասխանը երկուքի տեղ տասներկու տարի ըլլար: Եւ վերջապետութեան ըսաւ թէ ձիւտ չէր նոյն նժարի վրայ դնել Հայաստանի եւ Թուրքիոյ կարողութիւնները, Սպիտակի եւ վանի երկրաշարժներուն տարողութիւնը եւ անտեսել Հայաստանի շրջափակման իրավիճակը: Երանի Պրն. Սարգսեան զանց առնէր իր պատասխանի առաջին երկու բաժինները ու բաւարարուէր վերջին բաժնով: Պետութեան մը նախագահի աշխատակազմի ղեկավարի հասկնալի պատասխան կ'ըլլար եւ իր ներկայացուցած նիւթին յարիւր մտածելակերպ:

Իջեւանած ըլլալով «Անի» պանդոկ, ամէն օր կ'անցնէինք անոր հարեւանութեամբ գտնուող Ամենայն Հայոց կաթողիկոսի Երեւանեան նստավայրի եւ այդ համալիրին մէջ գտնուող կաթողիկէ մատուռի կողքով: Սովետական շրջանին, այդ մատուռին շուրջ այլ շէնքեր կառուցելով եւ զայն աչքէ կտրելով, փորձած էին անշքացնել զանիկա: Սովետական պաշտօնական քաղաքականութիւն էր: Թէեւ անընդունելի մեզ նման առաջին Բրիտանեայ պետութեան վարկին համար, բայց եւ այնպէս քաղաքականօրէն հասկնալի: Անհասկնալի ու անընդունելի, հնադարեան մատուռի անշքացման փորձն է, անտեղի ու փարթեմ նորօրեայ նստավայրի մը կառուցմամբ, փոխան՝ հինին արժէքի գնահատման ու վերարժեւորման: Այս հին մատուռի օրինակը մեզի յիշեցուց Ազգային ժողովի մէկ պատուիրակին տարիներ առաջ կատարած յայտարարութիւնը, որ 50 տարուան հնութիւն ունեցող գիրքը այսօրուան համար անարժէք կը նկատէր:


Մեր համոզումով, պաշտօն մը ստանցնել պէտք է նշանակէ պատասխանատուութիւն վերցնել քեզի ենթակներուն եւ ընդհանրապէս համայնքին ու ազգին օգտակար դառնալու: Պաշտօնը ծառայութիւն է: Որքան բարձր ըլլայ պաշտօնը, այնքան մեծ՝ անոր հետ եկող պատասխանատուութիւնը: Անցած երկու տասնամեակներուն, Հայաստանեան քաղաքական, տնտեսական թէ՛ այլ բնագաւառներու կենցաղի դիտորդի մը աչքէն չի կրնար վրիպիլ, որ դժբախտաբար պաշտօն ստանձնելը դարձած է վարինը արհամարհելու եւ շահագործելու տեսակ մը իրաւունք: Այլ խօսքով՝ գոռոզութիւն, որ կը մղէ օրինակի համար, պետութեան նախագահի պաշտօնը գրաւողին, ինքզինքը երկրի «միակ տղամարդը» յայտարարելու եւ կամ երկրի երկրորդ մեծագոյն քաղաքական կուսակցութեան ղեկավարին օր մը յիշեցնելու, որ «տոտ» է, ուրիշ օր մըն ալ անոր շնորհելու հայրենիքի ծառայութեան շքանշան: Դժբախտաբար այս անպատկառ (cynic) մտածելակերպը համատարած է վերնախաւին մէջ, որ արդիւնք է բարձր հոգեմտաւոր արժէքներու բացակայութեան, որ կը ծնի պատեհապաշտներ ու միայն վնաս կը բերէ մեր ազգային շահերուն:

Մեր ազգային ցաւերէն մին ալ այն է, որ մեծ-մեծ կը խօսինք ու բարձր երազներով կը տարուինք՝ Արեւմտեան Հայաստանի ազատագրում, ազգային գաղափա-

Մար. ք էջ 18

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909



**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---



**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրաճեցու է

Coverage & Protection should be on the top of your priority list.



**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

### ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆԸ

#### ԱԻՆՏԻՍՈՒԱԶՄԻԿ

Սովորական օրացույցներով համար Նոյեմբեր 29-ը ընթացիկ օր մըն է: Մինչ մեր պատմութեան էջերուն մէջ՝ առանձնապատու թուական մը:

1920-ին էր, երբ քեմալական զօրքերը Կարսի մարզին գրաւումէն ետք կը յառաջանային Ալեքսանդրապոլ, Երեւան եւ Արեւելահայաստանի վերջին տարածքները՝ ի սպառ բնաջնջելու Հայաստանն ու հայութեան բեկորները: Ազգի մը գոյութիւնը կը մօտենար իր վախճանին. կը լսուէին անոր հռչակները մահասարսուռ: Եթէ թաղանիս համայնաբանդ հարուածը վերջինը կը թուէր ըլլալ: Հայաստանի առաջին հանրապետութեան երկուքուկէս տարուան կեանքը մթազնած էր համարեալ, Սեւրի դաշնագիրով յանձնառու երկիրներ կ՛կուտած էին անխօս եւ անմոռունջ կերպով եւ անկախութեան պատրանքով ինքնամոռաց տարրեր բերկրանքէ ու խայտանքէ ետք՝ ինկած էին յուսաբեկութեան եւ ուշաթափութեան մոլորուն արահետները անհեռանկար:

Այս դժին կացութենէն դուրս գալու միակ ուղին ակնբախ էր բոլորին. այլընտրանք չկար՝ բացի Հայաստանի խորհրդայնացումէն:

Հայաստանի խորհրդայնացման իրողութիւնը կ'առնչուի երկու հական երեւոյթներու հետ: Առաջին՝ հայութեան ֆիզիքական ապահովութիւնը քեմալական գերակայ ռազմական սպառնալիքին դիմաց, որ անասնձ փոթորիկի նման տրամադրուած էր միանալու արեւելեան իր եղբոր՝ Ատրպէյճանին եւ ոտնատակ ընելու ասի մը Հայաստանը: Հայաստանի օրուան վարիչները Հայաստանի օրուան վարիչները այս վտանգը ըմբռնեցին բաւականին ուշ՝ երբ դանակը հասած էր ոսկորին. եւ հարկադրուած իշխանութիւնը գիջեցան խորհրդային երիտասարդ կարգերուն:

Երկրորդ՝ նոր վարչակարգ մըն էր որ հաստատուեցաւ. աշխարհին մինչ այդ անծանօթ ընկերային դրութիւն մըն էր որ տէրը դարձաւ երկիրին իր ընկերային-տնտեսական, քաղաքական-գաղափարախօսական ինքնատիպ համոզումներով: Հայաստանի երկրորդ խորհրդային հանրապետութիւնը նոր էջ բացաւ մեր պատմութեան մէջ 70 տարիներ գոյատեւելու համար իր դժուարին վերիվայրումներով, ստուերոտ դրուագներով թէ աննախադէպ նուաճումներով. այսինքն՝ սեւ ու սպիտակ էջերով:

19-րդ դարու սկիզբէն Հայաստանի շուրջ արձանագրուած զարգացումները անմիջականօրէն շարժակալուած են Ռուսաստանի անդրկովկասեան քաղաքականութեան հետ: Յայտարարուած ներկայութիւնը, ազդեցութիւնը եւ հեղինակութիւնը ոչ ոք կրնայ աննկատ թողուլ: Ռազմաքաղաքական, ընկերային-տնտեսական եւ գաղափարախօսական առումներով Անդրկովկասի ճակատագիրը կապուած է Ռուսաստանի հետ եւ այդ ծիրին մէջ է որ պէտք է դիտենք Նոյեմբեր 29-ի պատմական աթիւր, աւելին՝ մինչեւ 1991 անոր գոյատեւումը եւ ապա երրորդ հանրապետութեան հռչակումը՝ «անկախութիւն» պիտակին տակ:

Հայաստանի իրերայաջորդ երեք հանրապետութիւնները միեւնոյն շղթային յաջորդական օղակ-

ներն են: Սակայն, 1920 Նոյեմբեր 29-ին էր, որ թրքական երախը չկրցաւ կուլ տալ իր այնքան փայփայած խայծը, քանզի նոր կարգավիճակ գոյացած էր իր արեւելեան տարածքին: Ահա այստեղ է որ կարելի է զարմանալ կամ աւելի ճիշդ գայրանալ, երբ մարդիկ միեւնոյն նժարին վրայ կը դնեն «թրքական մուրճը եւ պոլշեւիկեան սալ»ը. անհեթեթեան եւ մոլուցքի ինչպիսի՞ դրսեւորում, երբ միեւնոյն արժեքափով կը փորձեն գնահատել թուրք Մուսթաֆա Քեմալն ու Քարապէթի փաշան եւ պոլշեւիկներ Ալեքսանդր Միասնիկեանն ու Աղասի Նանճեանը: Պատմութեան տրամաբանութեան չդիմացող հակուրութեամբ մարդիկ կը ձաբուտեն ըսելով՝ Հայաստանը կիսեցին քեմալականներն ու պոլշեւիկները. արդեօ՞ք 1920 Նոյեմբեր 29-ով ստեղծուած հանրապետութիւնը հայկական էր, ուր պիտի համախմբուէին հայոց մշակոյթի եւ գիտութեան ակնաւոր դէմքերը, ուր կամաց կամաց պիտի խոյանային ու կառուցուէին համալսարաններն ու գիտութեան կաճառը, օփերայի շէնքն ու աւելի ուշ Սարգարապատի յուշահամալիրը. Մատենադարանը, Մեծ Եղեռնի յուշարձանը, մեթրոյի կայանները, մարզահամերգային համալիրն ու աթոմակայանը:

Ժամանակը չէ՞ կամ ուշացած չէ՞ք մաղձազերծ ըլլալու եւ մօտիկ անցեալը սառնամտօրէն գնահատելու: Եթէ կարօտախտը ժամանակավրէպութիւն կը նշանակէ, ապա քինախնդրութիւնը ապակողմնորոշիչ գործօն չէ՞ պատմութեան հանդէպ իրատեսութիւնը մշուշող:

1991-էն ի վեր չկան խորհրդային կարգերը: Դարձեալ Քրեմլինի մէջ տեղի ունեցած արմատական փոփոխութիւններու հետեւանքով Անդրկովկասի մէջ խմորուեցան խլրտումներ. պատահեցան արիւնհանգուցիչներ, հռչակուեցան անկախութիւններ եւ հաստատուեցան նոր կարգեր: Իր հերթին Հայաստան թեւակոխեց երրորդ հանրապետութեան ժամանակաշրջանը. անկախութեան մեղրածորան շուրջաններուն ու ախորժալուր օրօրներուն զուգընթաց՝ արմատ նետեցին ընկերային-տնտե-

սական նոր ըմբռնումներ, մարդոց միջեւ բարոյական նոր յարաբերութիւններ եւ կենցաղային արտառոց կանոններ:

Երեւանի գլխաւոր մայրուղիներէն՝ Մաշտոցի անուան (նախկին Լենինի) պողոտայէն դեղերելով կարգ մը բնակարաններու վրայ կը նկատեմ նոյնանման յայտարարութիւն մը՝ «Վաճառուում է»: Է, առաջ մարդիկ անվճար տուն կը ստանային, հիմա կը ծախեն. կը ծախեն՝ որ չուեն հայրենիքէն: Է, առաջ հայութիւնը հողին վրայ կը բազմանար, հիմա մարդու արտահոսք է, ուղեղի եւ միտքի զանգուածային հայրենալքում է. - կը մտմտամ: Քիչ ետք աչքի խաբկանքով մը կը կարգամ՝ «գրատուն», որպէս հանրածանօթ գրքամուկարագցնեմ քայլերս խանութի ուղղութեամբ եւ ինչ զարմանք՝ «գրաւատուն» է եղեր...: Ինչո՞ւ ապշիլ՝ նոր կարգերու մէջ մարդիկ պարտքերու տակ գրաւի կը դնեն ինչք ու կալուած. ահա վայրագ դրամատիրութենէն նոր բարք մը եւս՝ առաջ գրախանութի՝ հիմա գրաւատուն: Այնուհետեւ կ'ուզեմ յամենալ այն վայրերը, ուր խորհրդային օրերուն գրախանութիներ էին, եւ այժմ... կօշիկի, ակնոցի եւ ներքնաշապիկներու խանութներ կամ խաղատուներ ու գիշերային ակումբներ (կապելաներ). Է, խորհրդային օրերու գիրքին (միտք) փոխարինած է ոտքը, սեռը, որկորն ու հեշտազրգիւ բարքերը: Անցեալի փառքին կորուստն է որ կ'ողբամ՝ ի հեճուկս ոմանց դպրովանքներուն եւ ապերախտութեան:

Կը նստիմ նոյն պողոտային մէկ անկիւնը ումպ մը սուրճ ըմբռնելու: 12-ամեայ պատանի մը կը մօտենայ՝ ծխախոտ խնդրելու. ճամբու կը դնեմ ժպիտով մը. ապա մի քանի մեծահասակ մուրացիկներ «հացի փող» կը խնդրեն աղիողորմ թախանձանքով մը, կը տատամսիմ, կը յուզուիմ ցաւատանջօրէն: Ո՞վ կրնար այսպիսի երեւոյթներու ակնատես ըլլալ 1991-էն առաջ: Կը մուտամ՝ ո՞վ վայրագ դրամատիրութիւն, թող ես թքնեմ քո ճակատին:

Ապա կը լսեմ ժխոր մը անախորժ. ինչ կայ նորէն, ինչ է պատահեր. «ակցիա» կառավարութեան դէմ. ոմանք իրենց յետեւալ աշխատավարձերը կը պահանջեն, ուրիշներ՝ խաբուելով կորսնցուցած բնակարաններուն փոխհատու-

ցումը. սեւազգեստ կանայք հայոց բանակին մէջ ներքին ոճիրներով սպանուած իրենց զինուոր-գաւակներուն արդար դատաստանը...: Օ, ինչէր փոխուած են անցեալէն այսօր: Կը նայիմ շուրջս՝ կառուցներուն մեծ մասը՝ խորհրդային օրերէն: Պահ մը փառք պիտի չտա՞նք այդ օրերուն, երբ կուտակներ կը բանէին հոս ու հոն: Իսկ ինչպէ՞ս մեկնաբանենք գրեթէ ամենօրեայ ոճիրները՝ երբեմն մի քանի հոգիներու մահուամբ: Եղբայր եղբօր թշնամի, նիւթական գործարքներ, մաֆիոզներ, պարտատէրի եւ պարտականի միջեւ դաշունահարումներ, չբացայայտուած սպանութիւններ, յաճախակի ծեծ ու ջարդեր, «օրէնքով գողեր» ու սանձարձակութիւններ, գաղտագողի մաքրագործումներ: Ալ չիօսինք մայթաղիճներու, համասեւամոլներու եւ կաւատութեան արհեստին մասին, որ նոր բարքերու հետ նոր թափ ստացաւ ցաւ ի սիրտ: Հապա ինքնապայանները: Անցեալին կար մէ՛կ ուժ, մէ՛կ հրահանգ, մէ՛կ խօսք ու վճիռ: Հիմա՝ արեւելահայկական բնութագրով՝ «չուներ տիրոջ չի ճանաչում»:

Նստած խօսակիցի մը հետ ինծի հարց կու տայ. - չե՞ս նկատեր մեր ժողովուրդին դէմքերը խոժոռ, տրտում ու տրանջացող, դժգոհ եւ ընդվզած: Կը պատասխանեմ՝ ո՛չ: Ինչո՞ւ: Որովհետեւ ես մտովի եւ հոգեպէս 1991-էն առաջ էի այդ պահուն, իսկ ինք կ'ապրէր ներկան, այսօրը. ինք նորահաս սերունդէն էր: Ես՝ խորհրդային օրերու չիշտակներով էի, ինք՝ այսօրուան դառնութեամբ եւ տգեղութեամբ: Նոյեմբեր 29-ին առիթով երախտագէտ չըլլա՞նք այն սերունդներուն ու վարչակարգին որոնք անվտանգ պահեցին Հայաստանի գոյութիւնը, շէնցուցին հայոց գաւակները առկնքնեցին հոն, պայծառացուցին գայն՝ մշակութային, գիտական, կրթական փառապանծ նուաճումներով:


Ափսոս, կարծէք ոչ թէ հանուր ժողովուրդին եւ սերունդներուն համար, այլ՝ մերօրեայ ալան թալանչիներուն եւ նորաբոյս աւազակներուն: Երախտագէտ ենք Նոյեմբեր 29-ով կերտուած Հայաստանին: Երախտագիտութիւնը առաքինութեանց ամենաազնիւն է եւ ամենափնտուռածը կրեստներով խճողուած այս միգամած օրերուն:



**ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ**  
 ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ՛ ՀԵՐՈՒԿԱՆ ՀԱՅ ՓԻԼՄԻ ԾՈՒՅԱԴՐՈՒԹԻՒՆ  
 ՏԵՂԻ Կ՝ՈՒՆԵՆԱՅ ԱՄՍՈՒՄՅ ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՀՆԱԳՇԱՐՔԻՆ

Հինգշաբթի 3 Դեկտեմբեր 2015, Երեկոյան ժամը 7:30-ին  
**ՀԿԲՄ** Կարօ Սողանալեան Սրահին Ներս  
 1060 N. Allan Avenue, Pasadena, CA  
 \$10՝ ներառեալ ընթրիք





**GAIDZ**  
 YOUTH ORGANIZATION  
 PRESENTS  
**GAIDZ MOVIE NIGHT**  
 EVERY FIRST & THIRD THURSDAY  
 OF THE MONTH  
**SUPER MAMA**  
 Armenian Comedy Movie  
 Thursday, December 3, 2015 at 7:30 pm  
 AEBU Garo Soghanalian Hall  
 1060 N. Allan Avenue, Pasadena, CA  
 \$10 Dinner Included

### ՎԱԽԻՆ Ո՞Ր ԿՈՂՄԸ ԿԱՆԳՆԻԼ

#### ՄԵԹՐ ՊԱՐԳԵԻ ԴԱԻԻԹԵԱՆ

Աշխարհաքաղաքացի (cosmopolitan) մարդոց օրրան Փարիզը, ուր մարդկային առաջնորդ միտքը ազատութիւն, հաւասարութիւն եւ եղբայրութիւն երրորդութեան հաւատամքը գրեց քանի մը դար առաջ, ուր մարդկային ճաշակին ու արուեստին գեղեցիկն ու նուրբը ծնաւ ու մշակուեցաւ դարերու ընթացքին, ուժգին հարուած ստացաւ խումբ մը ծայրայեղականներու կողմէ, որոնք իրենց ձախորդ ընթացքը շտկելու դարմանը անդի աշխարհին մէջ կը փնտռեն:

Հարիւրաւոր անմեղ գրեթէ իւրաքանչիւր հարուածը, որ շարունակութիւնը եղաւ աշխարհի տարբեր վայրերու մէջ տրուած հասակակիչներու հարուածներուն՝ օրին մէջ եւ ցամաքի վրայ, ստեղծեց վախի միջնորդ մը ամէն տեղ եւ մասնաւորապէս՝ Եւրոպայի ու Ամերիկայի մէջ:

Հարուածներ ստացած երկիրներու ղեկավարները գիտցան թէ ուր էր օձին գլուխը եւ իրենց արդար գալուցիւն թարգման հանդիսանալով՝ կրակ թափեցին Իսլամական Պետութիւն կոչուող սպանդանոցին վրայ: Եւ մինչ աշխարհ վճռակամօրէն միացած է ցամաքներու աղբիւրը այդ կրօնամոլներու հասակակիչութեան, վախ վաճառողները կամ վախի արշաւին պարագլուխները հանդիսացող բազէները (hawks) կամ փերեզակները այդ քաղաքական մտքին ու հոսանքին, գործի անցած են իրենց ծայրայեղ քարոզչութիւններով ու յայտարարութիւններով, սերմանելու համար ատելութիւն եւ բաժանում կրօններու, հաւաքականութիւններու եւ ժողովուրդներու միջեւ:

Միլիոնաւոր թափառական գաղթականներու վերաբնակեցման հարցով մտահոգ մարդը արեւմուտքի բաժնուած է այսօր երկու բանակախումբերու (camps) միջեւ՝ մէկը դէմ եւ միւսը թեր վերաբնակեցման: Եւրոպայի քանի մը երկիրներ պատեր կ'ուզեն շինել իրենց սահմաններուն վրայ (Իսրայէլի օրինակով), իսկ Ամերիկայի նախագահական ընտրութեան թեկնածուները սուր ու անբարենպաստ մեկնաբանութիւններով կը շեղին ամերիկեան բարձրէն, որ ճանչցուած է որպէս բոլոր ժամանակներու փրկարար ապաստանարան գաղթականներու՝ տագնապած աշխարհի արհաւիր քներէն փախչող եւ նոր տուն ու կեանք փնտրող ու աղբրսող:

Ամերիկայի Օպաման եւ Գանատայի նորընտիր վարչապետ թրուտօն, հակառակ իրենց երկիրներուն մէջ բարձրացած վախ ախուղ մունեստիկներու ձայնին եւ անոնց կողմէ հանուած աղմուկին, կը փորձեն հանդարտեցնել կիրքերը օգնութեան ձեռք երկարելով խեղճ ու թշուառ գաղթականներուն՝ անոնց նոր կեանք ընծայելու պետական ծրագիր մշակելով: Հակառակ կողմին պատճառաբանութիւնն այն է թէ գաղթականներու մուտքին հետ հասակակիչներ ներս պիտի սպրդին ու խանգարեն մեր հանգիստն ու ապահովութիւնը, ճիշդ այնպէս ինչպէս Յունաստանէն ներս մտնող գաղթականներուն հետ ներս մտած էին Փարիզը հասակակիչ մարդասպաններէն ոմանք: Ի՞նչն է ճիշդն ու շիտակը այսպիսի կացութեան մէջ: Ո՞ր կողմին կամ ո՞ր խումբին հետ ըլլալ այս պարագային: Արդեօ՞ք պէտք է «ես»-ը մարդուն իր վախի պատեանին մէջ գալարուելով երես դարձնէ միլիոնաւոր գաղթական-

ներուն, որոնք թողած տուն ու տեղ՝ կը փախչին դժոխային վիճակներէ եւ գայլ դարձած ու գազանացած մարդոց վոհմակներէ: Եւ կամ արդեօ՞ք մարդը մարդուն պէտք է ձեռք երկարէ յաղթելու վախին, որուն մէջ գինք կ'ուզեն դնել ահաբեկիչներն ու անոնց հակառակ ափին կանգնող ծայրայեղականները ցեղապաշտ արեւմուտքի...:

Դիւրին չէ վախկոտ մարդուն քաջութիւն սորվեցնել եւ գինք կողմնորոշել, երբ բոլոր կողմերէ վտանգ կը խուժէ մարդկութեան գլխուն ու անմեղ մարդիկ կը սպանուին:

Սակայն կ'արժէ հարց տալ վախ վաճառողներուն եւ օգնութիւն գլացողներուն.-

Այդ ե՞րբ էր որ չկար պատերազմ, չկար տեղահանութիւն ու գաղթականութիւն, եւ ի՞նչն էր որ դարձուց Ամերիկան փրկութեան լաստն ու ովասիսը գաղթականին՝ եթէ ոչ հաւատքը իր գաղթականներով գոյացած ժողովուրդին, որ ամէն մարդ արժանի է երկրորդ առիթի մը (a second chance) իր



կեանքին մէջ, երբ առաջին առիթով իր առջեւ կը փակուին բոլոր ճամբաները կեանքի...: Գաղթականները արժանի են օգնութեան, հակառակ անոնց շարքերուն մէջ գէշն ու վատը սպրդելու վախ առթող կարելիութեան:

Գոհաբանութեան Օրը, Ամերիկայի մէջ «Հայաստան» Հիմնադրամի պատասխանատուները թէլեթոնի միջոցով նուիրատուութեան արշաւի պիտի դիմեն Լոս Անճելըսէն: Արդեօք ո՞րքան արդար է կարգ մը

հայերու որոշումը նուիրատուութիւն չկատարելու, որովհետեւ, ըստ իրենց, հանգանակուած գումարները կը գողցուին կամ կը շահագործուին երբեմն «մութ ձեռքերու» կողմէ:

ոչ մի տուն չի եղել: Այնուամենայնիւ, չնայեա՞ծ նրան, որ տները կանգուն չեն եղել, բնակավայրի հետքերը բազմաթիւ են: Օրինակ՝ ալրաղացը, տպարանը... Տպարանը նոյնիսկ երկրորդ յարկ է ունեցել, որտեղ մինչև վերջերս հարսանեկան, նշանդէքի արարողութիւններ են իրականացուել: Այս ամէնի մասին իմ հետաքրքրութիւնն աւաջացել է տակաւին երիտասարդ

Շար.ը էջ 19

### ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԴԷՊՔԵՐ

#### ԿՈՐԻԻՆ

Մենք շատ ենք լսել կենդանիների հաւատարմութեան մասին: Ինչ դէպքեր, ինչ պատմութիւններ են ինչ սխրագործութիւններ ասես, որ չի պատահել մի քանի տեսակ կենդանիների, նաեւ որոշ թռչունների կողմից իրենց սնող, խնամող եւ վարժեցնող տիրոջ նկատմամբ: Տիրոջ ստացուածքը պահելու եւ պաշտպանելու գոհաբերութեան շատ դէպքեր են պատահել անասուն կենդանու կողմից, դրանով հանդերձ որ մտածելու կարողականութիւնից զուրկ եւ համր (չխօսող) են: Նրանք մարդի ցուցաբերած գուրգուրանքն ու փայփայանքը հասկանում են, զգում են եւ մարմնի շարժուձեւերով եւ ձայնի ելեւէջներով արտայայտում են իրենց ներքին զգացումները:

Մարդ-արարածը սիրում է կենդանիներին, նրանցից մի քանիսի հետ շատ սերտ մտերմութիւն է հաստատում, այնպէս որ դառնում է աւօրեայ կեանքի որոշ ժամերի

զբաղմունքը: Մարդը այնքան է կապուում, որի կորուստի հետ դժուար է հաշտուում, իմ կարծիքով փոխանակ կենդանիներ պահել ու փայփայել եւ կապուել նրանց հետ անքակտելիօրէն, լաւ կը լինի բարեսիրական ծառայութիւնների նուիրուել կամ կապուել ընթերցասիրութեան հետ:

Ինչպէս գիտենք վայրի կամ յօշոտող կենդանիները բնագոյով են կեանք ապրում, իրենց սոված ժամանակ ոչինչ չեն հասկանում եւ ոչ մի բանի դէմ չեն կանգնում ու չեն խնայում, պատահած որսին բռնում եւ իրենց քաղցը յագեցնում են, երբ կշտանում են, դառնում են բաւարարուած ու գոհացած, նոյնիսկ իրենց որսի մնացածը թողնում են ուրիշների համար, էլ ոչ մի որսի մասին չեն մտածում, նոյնիսկ իրենց մօտից անցնի գործ չեն ունենում հետը, բայց մեր կեանքում երբեմն հանդիպում ենք այնպիսի մարդ - արարածի, որ ամէն ինչով

Շար.ը էջ 19



**Կազմակերպութեամբ**  
**Պոլսահայ Միութեան**  
**Մշակութային և Կեդրոնական**  
**Սանուց Յանձնախումբերու,**  
**Արարատ Տան Էսքիճեան**  
**Թանգարանի և Նոր Սերունդ**  
**Մշակութային Միութեան**

**ՇՆՈՐԱՀԱՆԴԷՍ**  
**ՅՈՎՍԷՓ ԹՕՐԱԹԻ**  
**ԱԻԵՐԱԿ ԳՂԻ հատորին**

Բացման խօսք՝  
**Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան**  
 Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի  
 աստեճապետ՝  
**Օանօթացում՝**  
 Նոր Սերունդ Մշակութային Յանձնախումբի  
 աստեճապետ՝  
**Յարութ Տէր Դաիթեան**

**Սրտի խօսք՝**  
**Հեղինակ՝ Յովսէփ Թօրաթ**  
**Չորեքշաբթի, Դեկտեմբեր 9, 2015**

**Երեկոյեան ժամը 8:00ին**  
 Պոլսահայ Միութեան կեդրոնի մէջ  
 19726 Sherman Way Winnetka, CA 91306  
 Գեղարուեստական Յայտագիր  
 Մտադրը ազատ՝ Հիւրասիրութիւն

Յանելիալ տեղեկութեանց համար հեռաձայնել  
 Տօքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանին  
 (818) 800-1976

**Ձեռնարկը պիտի կատարուի հայերէն լեզուով**

ԱՐԻՑ ՓԱԽԱՆ ԱՆՕՐԵՆ ՍՏԱՅԱԿ ՏԱԿԱՆՔՆԵՐԸ

«Ձեր այդ Իթֆիհատ ընկերները օր մը ձեր ալ գլուխը պիտի ուտեն, Ձեր ազգին ալ»

Անդրաճիկ Օգոստոս  
«Ես այս բոլորը գրեցի, որ աշխարհն իմանար ով է թուրքը»  
Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան՝ Մորգընթաու

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ  
(Շարունակում ընթացիկ է)

Կարծում էին վերջացա՞ւ ...: Թուրքի սուլթանի համազգեստով գերմանի կայսր՝ դժոխքի կրակների մէջ վառուող Վիլհելմը, խնդրել էր նրա մուտքի դուռ ելնել, դիտելու արեւի շուրջը պտուտկող երկիր մոլորակը: Տեսաւ, որ նրա վրայ դէպի տիեզերք փայլատակող լույսի հեղեղ էր ճառագու՜մ: Նրան ասացին Արմին-հայերի աշխարհն է այն: Զարմացել էր, գայրացել էր, հրամայած էր եղել, որ նրա բնակիչները որպէս թանգարանային նմուշ միայն երկուսին թողնէին:

Վիլհելմ, դու եւ քու այդ սուլթանը չիմացա՞ք ո՞ւմ վրայ էիք գէնք ճօճում: Քու հաւատակիցները ասում էին որ այդ Արմին մարդկանց երկիրը դրախտն էր, առաջին մարդու արարչութիւնն էր այնտեղ եղել: Արարիչը, ինչքան հուր կար իր սրտում լցրել էր նրանց հոգիներին: Անապատի դաժանութիւնը իրենց սրտերում՝ անօրէն բարբարոս մարդիկ, գայլի պատկերով դրօշ ծածանելով, հարիւր հազարներով եկել հասել էին դրախտի երկիր, պղծել էին այն, ասպատակել հազար-հազար դարերի մի քաղաքակրթութիւն, նրա բնօրրանի մարդիկ այն տարած էին եղել նրա երկրամաս: Այնտեղ էր նաեւ քու յետնորդի քարոզած «Արեւական» ցեղի բնօրրանը: Արարչական Արմին-հայր իր տանը սարուկ եղաւ, յափշտակեցին իրենց արարումը, կերակրեցին նրանց: Երկրի քաղաքակրթութեան բոլոր նուաճումները Արմին-հայր սկզբնաւորեց: Նախնիների կառուցման լույսի ճախրանքի արարումը իրենց սրտերում՝ Սուլթանների արեգալույս պալատներ պատեցին, հաւատքի տներ՝ մզկիթներ պատեցին: Համադամ կերակուրներ եփել ու սուցանեցին, յետոյ «Թրքական խոհանոց» պիտի անուանէին այն: Իրենց աստուածատուր տաղանդով երկրում արդիւնաբերութեան, տնտեսութեան ձեռնարկումներ նախաձեռնեցին: Արարիչի առաքի՛նուլթիւնից գուրկ այդ մարդիկ՝ ասպերախտ եղան, նուաստացրին, սպաննեցին, վռնտեցին նրանց իրենց դրախտի երկրի 2500 շէներից, բազում հաւատքի տներից, նրանց քանդած որմերի վէմերից կացարաններ պատեցին: Գիշերներին նրանց վէմերի քանդակներից լույսի շողեր են պոռթկում:

Վիլհելմ, քու բարեկամների հետ կարծում էիք կ'այրուէ՞ինք: Այն արարչական արիւնը, որ մնաց ապրողաց սրտերում, իրենց նախնիների Արատա երկրի հովանաւոր Հայ-աստուծոյ որդի՝ Հայկի ոգու հեղեղը աշխարհներ անցաւ: Աշխարհների մարդկանց իրենց արարչական սերմն են բաշխում: Վիլհելմ, հիմա միլիոն-միլիոն Արմին-հայեր են այնտեղ, միլիոն-միլիոն Արմին-հայեր են աշխարհում: Իրենց երկրում արեւներ են վայր բերում, հակում նրանց շարժումները, աւետում նրանց ծնունդը, ուրիշ ազգերի մարդկանց հետ «սայլեր» են ուղարկում

արեւի մոլորակներ: Իրենց գաւազները նիւթի ամենա փոքրիկ մասնիկների պտոյտն են արագացնում, ճեղքում նրանց, որ լոյսի արարում լինի: Գնացել են քու ցամաքամասի երկիր՝ մասնակցելու տիեզերքի արարման խորհուրդի եղելութեան բացաչայտմանը:

Վիլհելմ, սուլթաններ, «Երեւակ» անօրէն սրիկաներ, Արմին-հայր աշխարհի սեղաններին կուռի է դուրս գալիս, մահ յայտարարում նրանց արքաներին, դափնէ յաղթական պսակներով երկիր վերադառնում, «խելացի» խաղի աշխարհի ու երկրամասի ախոյաններ ռեչակում: Նրանց արարչական քանթարներից ճառագած լույսն է շառագունում աշխարհների գիտական, ուսումնական տաճարներում: Քու հաւատքի Նոյ Նահապետը խաղողի առաջին տնկին էր նրանց հողին տուել, այն աշխարհներ գնացել, նրանից քամուած հիւթը խրախճանք պարգեւել, բանաստեղծների հոգիներում կրակ վարել:

Վիլհելմ, Արմին-հայերի բնօրրանի սպիտակաթուր գագաթը, մարդկութեան վերածնունդի տունն է, այնտեղ բազմացան, գնացին լցրեցին աշխարհներ: Այնտեղով անցաւ, բոյն դրեց անօրէն մարդկանց մի ցեղ, որոնց «երեւակ» ոճրագործները այրեցին, թրքացրին այն: Դուք ու երկրամասի «Մեծ» մարդիկ հեռուից դիտեցիք, ինչպէս էին կործանում իրենց իսկ նախնիների բնօրրանը, հապա՛ աչդպիսի ոճիր կը լինէ՞ր, իրենց անտարբերութեամբ չանցաւոր եղան, նրանցից ազնիւ ազգերի միայն քաններ ասացին՝ ցեղ էք սպաննել, քաղաքակրթութիւն էր սպաննել:

Աշխարհի պատերազմ, թուրքի «Երեւակ» Գերմանի-հետ դաշնակցած պատերազմի ելաւ, գիտուորագրեց ազգին մանուկ պարգեւելու ընդունակ հարիւր հազար ու աւելի Արմին-ներին: Զէնք չտուին նրանց, հնազան գործիքներով ճամբաներ բացին, պատերազմական վայրերում՝ կառքերի, գրաստների փոխարէն ծանր գէնքեր ու պիտոյքներ կրեցին լեռներն ի վեր, շատեր կքեցին նրանց ծանրութեան տակ, այդ յոգնատանջ «գիտուոր»-ներին խումբ-խումբ տարան ... սպաննեցին: Արեւելեան կողմն Արմին-հայեր ոչ միայն չապստամբեցին իրենց բարեկամ ուսանների դէմ, այլեւ վեց առանձին գունդերի Արմին-հայ մարտիկներ գէնք շաչեցին, կուռի ելան ցեղի դուշմանի դէմ: Անձեռնհաս, ռազմաճակատ վարելու անընդունակ «Երեւակ»-ի ոճրագործներից պաշտպանութեան նախարար՝ Էմիլը, տանուլ տուեց արեւելեան ճակատի կուռը, դուշմանի իննսուն հազար ու աւելի գիտուորներ գարնութեցին, ստեցին Ալաշկերտի բարձունքներում: Մուսաների լեռներում, դուշմանի դէմ հինգ յաղթական ճակատամարտեր մղած Արմին-հայեր՝ իրենց կուռը շարունակելու համար, վեց հարիւր քաջեր հիմքը դրին Հայկական Լեգէոնի, նրանց հազար-հազար միացան իրենց սրտերում ահագնացած ցեղի ցա-

ւին վրէժը լուծելու: Պաղեստինի «Արարա» լեռան գրոհով փլեցին Քեմալ Փաշայի (Աթա Թուրք) հրամանատարութեամբ ռազմաճակատի պատնէշները, գերավարեցին հազարներին, մարեցին նրանց յիտրտանքը: Գերմանիան, իր դաշնակիցների հետ տանուլ տուեց պատերազմը: Թուրքը նաեւ այն տանուլ տուեց, մասնաւորապէս արեւելեան ճակատում: Պատերազմը տանուլ տուած «Երեւակ»-ի ոճրագործ ճիւղները հրաժարուեցին կառավարութիւնից: 1918 թ. Հոկտեմբերի 30-ին, պատերազմը աւարտուելուց յետոյ, երիտթուրքերի վարկաբեկուած վարչակազմից ձերբազատուելու համար, նրանցից գերծ կառավարութեան նոր դահլիճ էր կազմաւորուել: Դահլիճը որոշում էր կայացրել, Օսմանեան պետութիւնը համաշխարհային պատերազմին տանելու եւ հայերի տեղահանութիւնն ու կոտորածը կազմակերպելու համար՝ պատասխանատուութեան ենթարկել երիտթուրքերի կառավարութեան «Երեւակ»-ի ու «Միւլութիւն եւ Առաջդիմութիւն» կուսակցութեան ղեկավարներին: Զերբակալուել էին երիտթուրքերի կուսակցութեան ղեկավարներ եւ այլ չանցաւոր պատասխանատուներ: Հայոց կոտորածների անմիջական պատասխանատուները ու կազմակերպիչները . . . ահից փախան: 1919 թ. Յունուարի 8-ին, Կոնստանդինապոլսում կազմուել էին դատական ատենաներ: Նոյն թուականի Մարտի 8-ի սուլթանի հրամանագրով ձերբակալուածները յանձնուել էին ռազմական ատենաներ: Դատավարութիւնը սկսուել էր նոյն թուականի Ապրիլ ամսին: Ընդհատուել էր դատավարութիւնը, անզլիական հրամանատարութիւնը 77 պատասխանատուներին բանտից տարահանել էին Մալթա կղզի, այնտեղից էլ փախցրել ուր որ պատահէր, առանց տեղորոշելու նրանց բնակութեան նոր վայրերը: Ատենաւ, հեռակալ կարգով մեղադրել էր 11 մարդու եւ դատավարութեանը ներկայ 20 մարդու: Մահուան վճիռ էր կայացուել թալեթի, էնվերի, ձեմալի եւ Նազըմի նկատմամբ: Նրանք ճողոպրած լինելով չէին ձերբակալուել: Անզլիացիք մասնաւորապէս հետաքրքրուած էին դատապարտելու «պատերազմական չանցազործներին»: Նրանք առանձնապէս հետաքրքրուած չէին հայկական կոտորածների պատասխանատուներին դատապարտելու, պատերազմը վերջացել էր, Կոնստանդինապոլիսը անզլիական հսկողութեան տակ էր, Անզլիա, ԱՄՆ չէին ցանկացել հակադրուել իրենց երկար տարիների առեւտրի մասնակցի հետ, չէին ցանկացել իրենց ազդեցութեան գօտիները կորսնցնել:

Հէնրի Մորգընթաու, Թուրքիայում ԱՄՆ դեսպան, գզուշացրել էր օսմամեան կայսրութեան պատասխանատուներին, նրանց տեղեկացրել՝ «Դաշնակից կառավարութիւնները պաշտօնապէս ազդարարում են, որ կայսրութեան ղեկավարները անձամբ պատասխանատու պիտի լինեն Մարդկութեան ու քաղաքակրթութեան դէմ կատարուած ոճիրների համար ... նաեւ օսմանեան բոլոր այն անձերը ու նրանց գործակալները, որոնք ներգրաւուած էին եղել նման կոտորածներին»: Պատերազմի ավարտից յետոյ», 1920 թ. Օգոստոսի 20-ին, կնքուած Սեվրի Դաշնագրի 230 յօդուածով Թուրքիան մերժել էր Թուրք ոճրագործներին տարաջանձ-

նել՝ Միջազգային Տրիպոլիտանում դատելու: Թրքական պետութիւնը, պարտաւորուել էր նրանց դատելու «Թրքական Պատերազմական Ատենանում»: Այդ նախադէպն էր «Համաշխարհային Երկրորդ Պատերազմի» Նիւրնպերկում գերմանացի չանցազործների դատավարութեանը: Թրքական ատենաների դատաւորութիւնները նմանակեղծուած էին՝ «Փարս»: Դաշնակից հայերին ոչինչ տուին, թուրքը ասեց, որ Հայը իրենց երկրում «Բոյն» չունի: Հիմա բուռն տենչում ենք Սեվրի դաշնագրի իրագործումը, որը ոչ մի տէրութեան կողմից վավերացուած չէ: Արեւելեան կողմն հայոց աշխարհում, մեր ազգակիցների համար գէնքով «բոյն» չի նեցիք:

Մալթա փոքրիկ կղզում Անզլիացիք բանտարկեցին 141 թրքական պատժատար անձանց, որոնցից 124 □ը պատասխանատու էին համարուել՝ որպէս «Պատերազմի Յանցագործներ», նրանցից միայն 17-ը նկատուել էին որպէս հայերի հանդէպ գործած ոճիրների պատասխանատուներ: Անզլիացիք, աւելի քան հազար պատասխանատու թուրքերի ցուցակ ունէին, որոնք դեռ ձերբակալուած չէին: Հակառակ նրանց նկատմամբ եղած զանգուածային փաստերի առկայութեան, դրանցից ոչ մէկը չէր դատուել: Մալթայի 124 թուրք պատասխանատուներից ոմանց թուրքացուել էր փախուստի դիմել, մնացածները փոխանակուել էին անզլիացի պատերազմական գերիների հետ: Լորդ Կուրզոն պիտի խոստովանէր, որ մէկ անզլիացու գերութիւնից ազատումը արժէր թուրք մարդոց մի նաւու բեռի հետ: Անզլիացիք, զանգուածային տեղեկութիւններ էին ձեռք բերել հայկական կոտորածների մասին, յայտարարել, որ այդ տեղեկութիւնները իբր թէ չէին մասնաւորել որեւէ անձաւորութիւն: Նրանցից շատեր ահից փախել էին, նրանց ուր լինելը եւ գործած չանցանքների փաստաթղթերը պահուել էին կառավարութեան պահոցներում, որոնք ցայսօր էլ գաղտնի են պահուած: Ամերիկեան կառավարութիւնը մերժել էր յանձնելու ոճրագործների մասին դեսպան Մորգընթաուի ու Թուրքիայում պաշտօնավարած հիւպատոսների տեղեկագրերը, իրենց չձերբազատելու համար Թուրքիայի հետ առեւտրական յարաբերութիւններից, մասնաւորապէս ծխախոտի հումքի առեւտրից: Անզլիան, դաշնակից տէրութիւններից իւրաքանչիւրը՝ Մուստաֆա Քէմալի Թուրքիայում իրենց ազգային շահերին էին հետամուտ, տարածաշրջանում Համայնավարական Ռուսաստանի ազդեցութիւնը տարաշրջանում չէզոքացնելու համար որոշել էին թաղել թուրք ոճրագործների ձերբակալումը ու դատապարտումը:

Սակայն, մահուան դատապարտուած, ոճրագործ անօրէնների վճիռները Հայը պիտի իրականացնէր: Շահան Նաթալին, գաղտնի պայմաններում ծրագրել էր նրանց ահաբեկման գործը: Կազմուած էր նրանց երկու հարիւրի «Սեվ Յանկ»-ը: Սպանուած հարազատների հոգիները վրէժի էին կանչել իրենց մանչերին, եկան նրանք Նաթալիի հովանու տակ, գտան ահի հատուցումից ճողոպրած անօրէն տականքներին, զարկին նրանց, որ իրենց մայրերը հանգիստ ձեմէլին դրախտի ճանապարհներով: 1921



### ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԸ ԸՆՏԱՆՔԻՆ ՄԵՋ

Հոգեբանական մթնոլորտը ընտանիքին մէջ իշխող տրամադրութիւններու, զգացումներու ամբողջութիւնն է: Հոգեբանական մթնոլորտը կ'որոշէ ընտանիքի անդամներուն միջեւ յարաբերութիւններու որակը:

Եւ կախեալ այն բանէն, թէ ինչպիսի տրամադրութիւններ ու զգացումներ կը գերիշխեն, մթնոլորտը կրնայ ըլլալ ինչպէս ուրախ ու ջերմ, այնպէս ալ բացասական, քանդիչ: Դրական հոգեբանական մթնոլորտի յառաջացման համար նախադրեալները կը ձեւաւորուին, երբ ամուսնական դաշինք կը կնքեն մարդիկ, որոնք ունին նման բնաւորութիւններ, միեւնոյն արժէքային համակարգ եւ կենսական առաջնահերթութիւններ, ընդհանուր նպատակներ: Եւ այդ պարագային ամուսինները համատեղ կեանքի ընթացքին կը զարգանան միանման, անոնց կեանքը կը դասաւորուի հարթ եւ բարեկեցիկ:

Իրադարձութիւններու նման բարենպաստ ընթացքը կրնայ խափանել հիւանդութիւնը կամ այլ անկանխատեսելի հետեւանքները: Սակայն սովորաբար այն մարդիկ, որոնք կ'ապրին սիրոյ եւ փոխըմբռնման մէջ, դժուար պահերուն եւս կը սատարեն իրարու եւ համատեղ կը յաղթահարեն յառաջացած խնդիրները:

Ընտանիքի մէջ ինչպէ՞ս կը դրսեւորուի դրական հոգեբանական մթնոլորտը: Սովորաբար այն ընտանիքը, ուր կը տիրէ դրական հոգեբանական մթնոլորտը, դիւրին է որոշել ըստ անոր անդամներու դրսեւորած վարքին: Այդ մարդիկ շատ կը շփուին իրարու հետ, անոնք կը կիսեն անցած օրուան տպաւորութիւնները, տեսած իրադարձութիւնները, գալիք օրուան կամ ամսուան ծրագիրները:

### ՁԵՐ ՁՈՒԳԸՆԿԵՐԸ ՁԵՐ ԱՐՏԱՅՈՒԼԱՆՔՆ Է

Մշտական յարաբերութիւնները կ'ենթադրեն մարդու հետ երկարատեւ՝ ամէնօրեայ, ամէն շաբթուայ կամ թէկուզ աւելի հազուադէպ շփում, ամէն պարագայի դուք այդ մարդուն հետ կ'ունենաք զգացմունքային կապ: Մտածելով ատոր մասին՝ ձեր մէջ կը յառաջանայ որոշ արձագանգ: Եթէ այդ արձագանգը դրական է՝ ուրեմն ամէն ինչ հրաշալի է, իսկ եթէ այդ մարդուն մէջ որեւէ բան հաճելի չէ՝ ձեզ համար, ուրեմն այդ արձագանգը նոյնպէս կը կրէ որոշ բացասական տարրեր: Մեզ առաւել վառ ու ստոյգ կ'արտացոլեն մեր գուզընկերները եւ անոնք, որոնց հետ մենք շատ ժամանակ կ'անցնենք:

Այնպէս որ այս հարցը կը պահանջէ ինքնակատարելագործում: Այդ մարդոց մէջ կրնայ որեւէ բան հաճելի թուիլ մեզի, կամ՝ հակառակը: Շատ հնարաւոր է, որ ոեւէ մէկուն հետ մենք պիտի ուզենք չչփուիլ, բայց Տիեզերքը այլ կերպ տնօրինած է: Մեր կեանքին մէջ ոչ մէկ պատահականութիւն կայ: Եւ մեր ճանապարհին հանդիպած իւրաքանչիւր մարդու մէջ կայ մեր մէկ մասնիկը:

Խնդիրը այն է, որ նմանը կը ձգտի նմանին: Այսինքն, եթէ կ'ուզէք աւելի լաւ, աւելի երջանիկ ու ներդաշնակ դառնալ, ուրեմն պէտք է փոխէք դուք ձեզ եւ ատիկա անպայման պիտի արտացոլի նաեւ ձեր դիմացինի բնաւորութեան գիծերուն մէջ: Եւ այն պահանջները,

Այդպիսի մարդիկ կը ձգտին իրարու հետ անցնել իրենց ազատ ժամանակը, միասին կ'ըլլան ոչ միայն տան մէջ, այլեւ հիւր երթալու ընթացքին կամ տարբեր ձեռնարկներու ժամանակ: Իբրեւ կանոն, անոնք լաւ յարաբերութիւններ կը պահպանեն իրենց ամուսինին ազգականներուն եւ ընկերներուն հետ: Այդպիսի ընտանիքներու մէջ ամուսինները հոգ կը տանին մէկը միւսին, կ'աշխատին ուրախացնել զիրար: Ձգտելով պահպանել դրական հոգեբանական մթնոլորտ, ամուսինները ոչ թէ կը հակաձառեն զիրար, վախեր կամ նեղացկոտութիւն կը դրսեւորեն, այլ՝ ուշադրութիւն, հոգատարութիւն եւ երախտիք:

Բացասական հոգեբանական մթնոլորտը եւ անոր հետեւանքները. Բացասական հոգեբանական մթնոլորտ կրնայ ձեւաւորուիլ անգամ այն ընտանիքին մէջ, որ դուրսէն բարեկեցիկ կ'երեւի: Այդպիսի ընտանիքի մէջ իւրաքանչիւրը կ'ապրի իր կեանքով, չկայ լիարժէք շփում եւ հոգեկան միասնութիւն: Այդպիսի իրավիճակ կը ձեւաւորուի, երբ մարդիկ անհամատեղելի են իրարու հետ՝ կապուած տարբեր դաստիարակութեամբ, հասարակական կարգավիճակով, արժէքներով եւ համոզումներով, ինչպէս նաեւ՝ ընդհանուր նպատակներ չունենալով: Բացասական հոգեբանական մթնոլորտը վատ հետեւանք կ'ունենայ ընտանիքի իւրաքանչիւր անդամի զգացմունքային իրավիճակին վրայ, սակայն ամենաշատը կը տուժեն փոքրիկները: Փոքրիկը պէտք է մեծնայ լիակատար համաձայնութեան եւ փոխըմբռնման, յարգանքի ու հոգատարութեան մթնոլորտի մէջ. միայն այդ պարագային ան կը մեծնայ իբրեւ հոգեբանօրէն առողջ եւ երջանիկ մարդ:

րը, զորս դուք կը ներկայացնէք մարդոց, իրականութեան մէջ դուք ձեզ կը ներկայացնէք:

Եթէ դուք դժգոհ էք մէկուն բնաւորութեան մէկ գիծէն, ուրեմն դուք ենթադրուողովքով դժգոհ էք նաեւ ձեր այդ նոյն գիծէն, պարզապէս չէք խոստովանիր: Յաւոք, մարդու համար դժուար է նախ ինքզինք վերլուծել, իսկ յետոյ իր դժգոհութիւնը արտայայտել գուզընկերոջ նկատմամբ: Այս հարցով բոլորովին ճիշդ չէ նաեւ լուրը, դիմանալը ու եղածին հետ համակերպիլը: Եթէ մարդիկ կը կազմեն ձեր կեանքի կարեւոր մասը, ուրեմն պէտք է անպայման խօսիլ այն ամէնուն մասին, որ կը մտահոգէ ձեզ: Անկեղծութիւնն ու ազնուութիւնը լաւ ու ամուր յարաբերութիւններու երաշխիքն են:

Դուք պէտք է վերլուծէք ձեր ընկալումները ու սկսիք աշխատիլ այդ ուղղութեամբ: Հանգոյցը հանգոյցի ետեւէն բանալով, դուք պիտի հասկնաք՝

- 1. Որ ձեր թշնամիները ամենեւին ալ թշնամիներ չեն,
- 2. Որ իւրաքանչիւր մարդու հետ կարելի է ընդհանուր լեզու գտնել, իսկ այն մարդը, որ ձեզ կը զայրացնէ ու որուն հետ դուք պիտի ուզէիք դադարեցնել շփումը, պարզապէս պիտի հետանայ ձեր կեանքէն կամ ալ պիտի դառնայ ձեր ընկերը,
- 3. Որ աւելի լաւ մէկը գտնելու յոյսով գուզընկերը ձգելը կրնայ սխալ քայլ ըլլալ, քանի որ այդ

### ԻՆՉՊԷՄ ԽՈՒՄԱՓԻԼ ՄԱԶԱԹԱՓՈՒԹԵՆԵՆ ԵՒ ԴԱՆԴԱԴԵՑՆԵԼ ՄԱՋԵՐՈՒՆ ԾԵՐՄԿԻԸ

Մագաթափութիւնը, ճերմակ կամ անփայլ մագերը՝ համապատասխան հանքանիւթերու, սպիտակուցներու եւ վիթամիններու պակասի արդիւնք է: Մասնագէտներու կարծիքով՝ ասոնցմէ խուսափելու լաւագոյն տարբերակը ճիշդ սննդականոնն է:

Եթէ որոշած էք բուժել մագերը ու կանխարգիլել անոնց ճերմակիլն ու մագաթափութիւնը պէտք է սկսիլ արեան քննութենէն ու սննդականոնի հետազօտութենէն:

Ըստ մասնագէտներու՝ մագերը գրեթէ 90 տոկոսով կազմուած են սպիտակուցներէ: Այդ պատճառով օրուան սննդականոնին մէջ պէտք է պարտադիր ընդգրկուած ըլլան բաւարար քանակով սպիտակուցներ:

Ինչպէ՞ս խուսափիլ մագերու ճերմակիլէն

Մագերու ճերմակիլը կարելի է կանխել ընկոյզ ուտելով: Անիկ կը պարունակէ մեծ քանակութեամբ պիոթին, վիթամին E եւ օմեկահարպեր: Ընկոյզը նաեւ կը պարունակէ պղինձ, մեթիոն: Մասնագէտը կը նշէ, որ պղինձի պակասն է, որ կը յանգեցնէ մագերու ճերմակիլուն: Մագաթափութեան պատճառները բարակ մագերն ու մագարմատներու տկարութիւնը կրնայ կապուած ըլլալ երկաթի պակասի հետ: Թէեւ ատոր համար կան բազմաթիւ այլ գործօններ եւս, ինչպէս օրինակ ճնշխտը կամ մթնոլորտի աղտոտութիւնը: Սակայն, անոնց ազդեցութիւնը այդքան զգալի չ'ըլլար, եթէ չ'ըլլայ երկաթի պակաս:

Մագաթափութենէն խուսափելու համար պէտք է ուտել երկաթ պարունակող ուտելիքներ՝ կարմիր միս, հնդկաձաւար, խնձոր: Հաւկիթը օգտակար է մագերուն ոչ միայն ուտելիքի տեսքով, այլ նաեւ մագերու համար ամրացնող դիմակի: Անիկ կը պարունակէ սպիտակուցներ, քերթին, վիթամին D եւ B, պիոթին, որոնք կ'ամրացնեն մագերը եւ զանոնք կը դարձնեն

ուրիշին հետ պիտի ըլլայ նոյնը, եթէ դուք մինչ այդ չ'զիտակցիք ու չ'իւրացնէք ինքնակատարելագործման այն խնդիրները, որոնք կեանքը առաջադրած է ձեզ: Հողի պէս սուրբ ու բեղուն եւ կրակի նման նենգ, դու՝ յայտնութիւն հրաշքի, տառապանքի դու օրէնք:

աւելի առաձգական: Նուազ կարեւոր չէ նաեւ մագերու ճիշդ խնամքը, որ առանձնապատուկ սննդականոնն չի պահանջուիր, ընդամէնը բազմազան ու առողջ սննդականոն, որուն համար, պէտք է վերանայիլ ուտելիքներուն ցանկը: Նոյն սննդականոնները տարբեր կերպով կ'ազդեն մարդոց վրայ:

Սննդականոնը, որ կը համապատասխանէ մէկուն, կրնայ օգուտ չի տալ ուրիշին: Սննդականոնի մասնագէտներ պարզած են, թէ ինչն է ասոր պատճառը: Հետազօտութեան համաձայն, մարդիկ, իրենց աղիքային համակարգէն կախեալ, ուտելիքը կը մարսեն տարբեր կերպով: Այն ուտելիքները, որոնք չեն ազդեր մէկուն արեան մէջ շաքարի մակարդակին վրայ, կրնան ուրիշի մը արեան մէջ կլիւքոզի մակարդակի կտրուկ աճի յանգեցնել: Ասիկա իմանալով՝ սննդականոնի մասնագէտները նկատելի յառաջընթաց արձանագրած են իւրաքանչիւրի համար ճիշդ սննդականոն մշակելու հարցով: Հետազօտութեան մասնակցած են տարբեր կլիւքոզ ունեցող 800 մարդ: Փորձարկողներուն առաջարկուած է միատեսակ ուտելիք, որպէսզի հետեւին, թէ անոնցմէ իւրաքանչիւրի մարմինը ինչպէս կ'արձագանգէ նոյն ուտելիքին: Մասնակիցները իրենց մօտ պիտի նշէին, թէ իրենց ամէնօրեայ կեանքին մէջ ինչ ուտելիք կ'ուտեն:

Նշանակալի է, որ ամբողջ կեանքի ընթացքին աւելորդ կշիռքի դէմ պայքարող կնոջ մը մօտ կանոնաւոր կերպով լոլիկ ուտելու պատճառով կտրուկ բարձրացած էր արեան մէջ շաքարի մակարդակը: Ասիկա գարմանալի է, որովհետեւ լոլիկը, իբրեւ կանոն, կը պատկանի այն մթերքներու շարքին, որոնք չեն ազդեր արեան մէջ կլիւքոզի պարունակութեան: Իրականացած փորձարկումը ապացուցած է, որ նոյն ուտելիքները չեն կրնար նոյն օգտակարութիւնը ունենալ:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

## VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան Եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabahian**  
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

### ՀԱԿԱԴՐՈՒԹԵԱՆՑ ԵՐԿԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ

#### Շարունակում է 6-էն

րախօսութիւն, ազգային միասնութիւն, ազգային եւալըն, բայց երբ հարցը կու գայ այդ մեծ խօսքերն ու երազները մեր առօրեային հետ փոքր քայլերով կապելու եւ կամաց կամաց իրականացնել փորձելու, կամ շրթունքային ձեւակաւ ծառայութիւնէ անդին չենք երթար, եւ կամ ալ անհամբեր կը դառնանք եւ «մահ կամ ազատութիւն» դաւանելով կ'ընթանանք մահուան յախուռն ճամբով, քան թէ՛ ազատութեան կշռադատ ուղիով: Այս մտայնութեան արդիւնք է, որ հոգեմտաւոր բարձր արժէքներ դաւանել կը յաւանանք, բայց մարդկային տարրական իրաւունքներ կ'ոտնակոխենք: Այս մտայնութեան արդիւնք է, որ «Արի Տուն» կը գովերգենք, բայց երկիրը կը դատարկենք: Այս մտայնութեան արդիւնք է, որ Երեւանի մէջ կը նախընտրենք Հիւսիսային պողոտայ կառուցել եւ անբնակ պահել, քան թէ Գիւմրիի մէջ աղէտի գոտին վերացնել եւ ժողովուրդը հոն պահել: Այս մտայնութեան արդիւնք է, որ սփիւռքէն ներգրուածներու կողմէ կ'ուղղենք, բայց երկիրը կը կողոպտենք ու հարստութիւնը դուրս կը հանենք: Այս մտայնութեան արդիւնք է, որ սահմանադրական փոփոխութիւններու անհրաժեշտութիւնը կը ջատագովենք, բայց չենք վարանիր եղածն ալ խախտել իշխանաւորի քմահաճոյքին անսայով: Այս մտայնութեան արդիւնք է, որ Եւրոպական Միութեան հետ համակարգուելու մասին կը ճառենք, ու յանկարծ Եւրասիական Միութեան կը միանանք: Ի՞նչու կ'իյնանք այսպիսի հակադրութեան մէջ: Որովհետեւ, ինչպէս Թուրքիան հարիւրամեակ մը առաջ՝ «մենք ներսից ենք փչացած» ու առողջանալու համար պէտք է ցուցաբերենք «ազգային իմաստութիւն, հոգու արիութիւն եւ առողջ բնազդներ»:

Ի՞նչպիսի գզացումներ պիտի ապրէր «Ամենայն Հայոց Բանաստեղծը» եթէ չայտնուէր այսօր: Վստահաբար յուսախաբ պիտի ըլլար տեսնելով, որ իր առաջարկած ղեղատոմսը կը մնայ փակ դարակներու մէջ: Տեսնելով, որ ղեղատոմսի արժանիքները ընդհանրապէս բացակայ են Հայաստանի թէ

Սփիւռքի ղեկավար դասին մէջ, շատ քիչ բացառութեամբ: Բայց եւ այնպէս լաւատես անձ մը ըլլալուն համար, պիտի փնտռէր յուսադրող երեւոյթներ: Ու իր աչքերէն պիտի չի վրիպէին քանի մը հաստատութիւններ, որոնք լաւատեսութիւն պիտի ներշնչէին եւ բարօր ապագայի մը յուսադրիչ նշոյլները պիտի տային: Պիտի ուրախանար ի տես վերեւ նշուած «Լոյս» Հիմնադրամի առաքելութեան: Պիտի հրճուէր ի տես «Այբ» դպրոցի տեսլականին՝ միաւորելու Մեսրոպեան դաստիարակութեան աւանդը նորօրեայ կրթական յառաջդիմութեանց հետ եւ դաստիարակելու իր արմատներուն կառչած բայց 21րդ դարի մարտահրաւէրները դիմագրաւող նորահաս սերունդներ: Խորին հասկացողութեամբ պիտի ընկալէր Արեւմտեան մշակութի օգտաբեր երեսները Հայաստան ներմուծող Հայաստանի Ամերիկեան Համալսարանի գործունէութիւնը: Պիտի հայրական ներողամտութեամբ նայէր իր անուան փառաքչական աղաւաղումը կրող «Թումո Ստեղծարար Տեխնոլոգիաների Կենտրոնին», ու հրճուէր անոր հիանալի գործունէութեամբ եւ հազարաւոր պատանիներու համացանցի յեղափոխական նորութիւններուն հետ ծանօթացմամբ: Բայց վստահաբար պիտի գայրանար ի տես «Թումանեան Շառլոմա»ին եւ դատարան պիտի դիմէր փոխելու գայն: Դժբախտաբար դատը պիտի կորսնցնէր եւ ստիպուած պիտի դիմէր Եւրոպայի Արդարութեան Դատարան, որ ի նպաստ իրեն արդար վճիռ պիտի արձակէր...

Հայաստան այցելութեան մեր վերջին օրերն էին: Կը քալէինք Բաղրամեան պողոտայով, ուր երթեկութիւնը ազատ կ'ընթանար, էլեկտրական հոսանքի թանկացման դէմ բողոքի ելած երիտասարդներու շարժման տապալումով: Ուտքով անցնողներու կարմիր լոյսը վառեցաւ: Կանգ առինք: Կողքիս պապիկ մը իր թոռնիկին ձեռքէն քաշելով ուզեց օրէնքը խախտել եւ ճամբան անցնել: Աղջնակը պապիկին ձեռքը ետ քաշեց ու մնաց կանգնած մինչեւ որ լոյսը կանաչ դարձաւ: Յուսադրիչ երեւոյթ էր: Մաղթենք, որ այդ աղջնակին նմանները բազմաման, որքան շուտ, այնքան լաւ: Քանի դեռ ուշ չէ:

### ԱՐԱՍ ՀԱՅԿԱԶ, «ՄՈՌՑՈՒԱԾ ԷՋԵՐ»

#### Շարունակում է 14-էն

կու գիշեր հովը այնքան ուժեղ էր, որ վախցայ, թէ քամին մեր տանիքը պիտի առնէ ու տանի չես գիտեր ո՞ւր»: Արդէն սկիզբէն՝ շարունակութիւնը ձեզ հետաքրքրութեան կը մղէ:

Ապա «Մենք» պարբերականին մասին կը հոլովուի խօսքը. երիտասարդներ թերթ մը կը հրատարակեն Գանատայի մէջ, որուն աշխատակցելու Արամ Հայկազը մղեց զիս եւս: Նուիրական փորձեր ամերիկեան ցամաքամասին մէջ:

Դարձեալ խօսք «Կուրի սիրահար» Անդրանիկի մասին՝ միշտ ջերմաջերմ:

Շապին Գարահիսարի հերոսական մարտերու մասին յաւելեալ տեղեկութիւններով հասանք հատորին 100րդ էջը: Եթէ այսպէս շարունակենք, պիտի գրենք 15 էջ եւս:

«Այցելութիւն մը հին թաղիս» գրութիւնը Ամերիկայի մասին է: Եթէ ներքաշող ուժ մը ունի այդ ամերիկեան հին թաղը, հապա երկրին հին թաղերը որպիսի ուժով Արամ Հայկազը կը մղեն դէպի երկիր: Ինչ որ կատարած է ան՝ ոգեղինացած:

Խօսք կայ նաեւ գրաքննադատ, խմբագիր Գուրգէն Մխիթարեանի մասին, որ Շապին Գարահիսարի մէջ Արամ Հայկազի բարոյագիտութեան ուսուցիչը եղած է:

Մենք եւս սիրով կարգացած ենք Գուրգէն Մխիթարեանի «Քառորդ դար գրականութիւն» գիրքը: Ահա թէ մշակութի ճակատին վրայ ինչպիսի հանգիտութիւններու հասնիլ կարելի է:

Օգանեանները յայտնի ընտանիք եղած են Շապին Գարահիսարի մէջ. 2օրավար Անդրանիկի նման աշխուժ մէկն ալ Միւրիման Օգանեանն է, որմէ յաւելեալ տեղեկութիւններ կը ստանայ Արամ Հայկազ քաղաքին հերոսամարտին շուրջ, ու անոր մասին կը գրէ. «Ժողովներու մէջ հակոտնեայ եզրերը իրարու բերելու, հաշտեցնելու եւ ներդաշնակելու ձիրք ու կամեցողութիւն ունէր: Համբերող էր: Չէր բարկանար, բայց եթէ բարկանար, բորբոքած վեսուֆ էր»:

Ունինք այստեղ մեր գոյգ կաթողիկոսներուն -Ամենայն Հա-

յոց կաթողիկոս Վազգէն Առաջինին եւ Կիլիկիոյ կաթողիկոս Խորէն Առաջինին - շնորհաւորագիրները ուղղուած Արամ Հայկազին՝ անոր գրական գործունէութեան 50ամեակին առիթով, նոյն սիրալիրութեամբ գրուած:

Պօղոս Մնայեանէն ընդարձակ գրութիւններ կան: Մէջբերենք. «Ընթերցողին այնպէս կը թուի երբեմն, որ կարգացած էջերը գրագէտի մը կողմէ գրուած չեն, այլ՝ կենսայորդ մարդու մը հոգիէն, ջիղերէն ու նեարդերէն յորդած եւ թուղթին ախօսներուն անցած զգայնութիւններ են, գեղումներ են, արեան թրթուացումներ, արցունքի ալրուածքներ, ձայներ, կարօտներ, որոնք բխելով ինքն իր հոգիին հետ անկեղծ, խանդաբորբ, տառապակոծ սրտի մը խորունկ ալիքներէն, իրենց կարգին շնչառութիւն մը կը բերեն, գունավառութիւն մը, երբեմն՝ ծաւալուն բոցեր ու հեռունեղէն եկած թանկ արձագանքներ»:

Նման վերլուծումներու քիչ անգամ կը հանդիպինք:

Այս հատորին մէջ այսուհետեւ պիտի հանդիպինք անուններուն Բաբգէն Փափագեանի, Աշոտ Նուրեանի, Նուպար Չարխուտեանի, Շահանուխի, Մինաս Թէօօլեանի, Արմէն Տօնոյեանի, Զաւէն-Լեւոն Սիւրմէլեանի, Գեորգ Աբէլեանի, էլօ Սարաֆեանի, Քնար Ճինպաչեանի, Յակոբ Օշականի (թէ ինչպէս կը դասախօսէր ան), Յ. Չորեցիի (Յարութիւն Նաճարեան), նաեւ գրութիւններ Արամ Հայկազի ի Պէյրութ կեցութեան -ուր եւ իր յոբելինական հանդիսութիւնը-, Այնճար այցելութեան մասին, ինչպէս նաեւ, իբրեւ «Յաւելուած», Արամ Հայկազի եւ Վրէժ-Արմէն Արթիւնեանի շատ հետաքրքրական թղթակցութեան, որուն կը հետեւին մեծարժէք ծանօթագրութիւններ՝ հարստացնելով հատորը:

Ահա վերին աստիճանի անկողմնակալ, արխիւային նիւթերով խտացած գործ մը:

Կը սպասենք Արամ Հայկազին նուիրուած եօթներորդ հատորին՝ կանխաւ շնորհակալութեամբ: Պիտի գտնուի՞ մեկենաս մը, որ փափաքի անոր տպագրութիւնը հովանաւորել՝ իր անունը կցելով անմահանուն Արամ Հայկազին:

### ՄՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՆՈՐՅՆԷՔ

#### Շարունակում է 13-էն

անոր հասարակ իմաստ մը տալով, երբ ան միայն ու միայն կը պատկանի Ս. ԾՆՆԴԵԱՆ ԶՐՕՐՀՆԷՔԻՆ՝ ի յիշատակ Մեր Տիրոջ Սուրբ Մկրտութեան Յորդանան գետին մէջ՝ ձեռամբ Յովհաննէս Մկրտիչին:

Հայաստանեայց Եկեղեցւոյ Մատենաներուն մէջ, Ժամագիրք, Մաշտոց, Ճաշոց, միայն մէկ անգամ Զրօրհնէք կատարել հրահանգուած է, եւ բառը ըստ կանոնի մէկ անգամ միայն գործածուած է, եւ այն ալ միայն Ս. Ծննդեան Պատարագի աւարտին՝ Յունուար 6-ին: Իմաստութիւնն է այդ մեր նախնեաց ուրիշ մեզի կը հասնի այն լուրջան հրահանգը թէ չնուազեցնել Յիսուսի Մրկրտութեան սրբազան խորհուրդը, Զրօրհնէք եզրաբանութիւնը այլ պարագաներու եւս յարմարցնելով: Կայ սակայն անոր արդէն իսկ պատրաստ միջոցը, չգրկել հաւատացեալները եւ սակայն կա-

տարելով արդէն իսկ մեր Մաշտոցին մէջ նշանակուած ԽԱԶԱՀԱՆ-ԳԻՍՏԼ:

Հայ Եկեղեցւոյ Մաշտոցը կամ Ծիսարանը հաւատացեալներու յատուկ Խաչահանգիստ կանոնակարգը հաստատած է ուր կան յատուկ ընթերցուած եւ աղօթք, Ս. Խաչը ջուրին մէջ գետեղելէ ետք, որուն վերջաւորութեան, ինչպէս նշուած է, Սուրբերու Մատենաներով, եթէ կան, օրհնել ջուրը, եւ ապա Միւռնոնաթափ կատարել՝ հիմնապէս հաւատացելոց առողջութեան եւ հիւանդութեանց բժշկութեան համար, եւ ոչ անպայման Նոր Միւռնոնը «ներկայացնելու» միտքով: Յարմարագոյն կերպն է Խաչահանգիստի կարգով, որ պատրաստ է արդէն, կատարել ինչ որ կը միտի Նոր Միւռնոնի պարագային, առանց գործածելու Զրօրհնէք յատկաբանութիւնը որ ինչպէս կրկնապէս ըսուեցաւ, կը վերապահուի մի միայն Մեր Տիրոջ Մկրտութեան՝ տարին մէկ անգամ միայն:

### ԱՅԻՑ ՓԱԽԱՆ ԱՆՕՐԵՆ ՍՏԱՅԱԿ ՏԱԿԱՆՔՆԵՐԸ

#### Շարունակում է 16-էն

թ. Մարտի 15-ին Սողոմոն Թեւլիրեանը Բեռլինում գգեստնեց Թալեաթին: 1922 թ. Հուլիսի 25-ին Տաշիրի Խուտորը օրցիներ Ստեփան Ծաղիկեանը ու Պետրոս Պօղոսեանը Թիֆլիսում սպաննեցին ձեմալին: Կարմիր բանակի սպայ, էնվլերի Բասմաչեանին ջախջախած Յարութիւնեանը, 1922 թ. Օգոստոսի 4-ին, Արուստան փախչելու սահմանի մզկիթում աղօթքից ելած էնվլերի գգեստնեց: 1920 թ. Յունիսի 19-ին, Արամ Երկանեանը ու Միսաք Կիրակոսեանը Ազգրպալանի վարչապետ Ֆատալի Խան Վօյսկուն: 1921 թ. Յուլիսի 18-ին Միսաք Թորլաքեանը սպաննեց Ազգրպալանի ներքին գործերի նախարար Բէհբուտ Խան ձիւանչիրին: 1921 թ. Դեկտեմբերի 5-ին

Օսմանեան Մեծ Վէզիր Հալիմ Փաշային սպաննեց Արշաւիր Շիրակեանը: Երիտասարդ թուրքերի «Միութիւն ու Առաջդիմութիւն» կուսակցութեան հիմնադիր անդամներից Բէհհետտին Շակիրին 1922 թ. Ապրիլի 17-ին գգեստնեց Արամ Երկանեանը: 1922 թ. Ապրիլի 17-ին Տրապիզոնի վալի ձեմալ Ազմինին սպաննեց Արշաւիր Շիրակեանը: Հայ մարդիկ, ահաբեկման սպառնալիքով, պահանջեցին Շահան Նաթալիից դադարեցնել ահաբեկումները ... ափսոս որ կիսատ մնաց նրա ծրագիրը:

Սրբացան մարտիրոսացած Արմին հայերը, սրբերին չեն ողբում, իրենց պատմութեան հետ նանց տանում են յաւերժութիւն: Արմին-Հայ ապրողաց՝ ՈՂՁՈՅՆ ... ՈՂՁՈՅՆ գէնքի ելած հայ քաջերին:

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

**Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը որ ցաւով իմացաւ Յունաստանի Ս.Դ.Հ.Կ. Վարիչ Մարմնի անդամ ընկ. Յակոբ Պէքարեանի կսկծալի մահը, որ մեծ կորուստ մը եղաւ ընտանիքին եւ շրջապատին:**

Այս տխուր առիթով մեր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի այրիին, զաւակներուն, եղբայրներուն, շրջանի կուսակցական ընկերներուն եւ համայն պարագաներուն:

**Ս.Դ.Հ.Կ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ**



### ՓՈՒՍԱՆ ԾԱՂԿԵՊԱԿԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ

**ԸՆԿ. ՅԱԿՈԲ ՊԵՔԱՐԵԱՆԻ** ողբերգական մահուան տխուր առիթով, Տէր եւ Տիկին՝ Ընկերներ Յարութիւն եւ Լուսին Պոչամեան իրենց խորագրաց ցաւակցութիւններ կը յայտնենք հանգուցեալի այրիին, զաւակներուն եւ յատկապէս եղբորը՝ Ընկ. Կարօ Պէքարեանին:

Այս առիթով, փոխան ծաղկեպսակի, «Մասին» շաբաթաթերթին կը նուիրեն 100 տուար:

### ԱՐՄԱՇԻ ՀԱՅԵՐԸ ՄԵՐ ՀԱՐԵՒԱՆՆԵՐՆ ԷՆ

Շաբունակուած էջ 15-էն

տարիքում, երբ ինձ ասացին. «Մեզանից առաջ այստեղ հայերն են ապրել: Ինչո՞ւ այսպէս եղաւ»:

Այդպէ՛ս սկսեց գիրքը գրելու պատմութիւնը:

Իզմիթի Ազդիլի արուեստի ասոցիացիայի ստեղծագործական խմբակում «Ձեան եւ մոմի բոյրը» վերնագրով պատմութիւն էի գրել, որտեղ նկարագրում էի Արմաշի մօտակայքում գտնուող Շերասփար Սուրբ Մարիամ եկեղեցին: Խմբակիցներից մէկն ասաց, որ պապը հայ է, որ շատ է տպաւորուել պատմութիւնին: Մտածեցինք, որ այս պատմութիւնը կարող է վէպի վերածուել: Այսպիսով սկսեցի Արմաշի մասին վէպ գրել: Աւելի խորացրեցի Արմաշի եւ Իզմիթի հայերի հետ կապուած իմ հետազօտութիւնները: Հետազօտութիւնների ընթացքում կարգացի Արմաշից եւ Իզմիթի շրջակայքից հայերի ստիպողական գաղթի մասին, եւ այս ամէնն էլ ընդգրկեցի իմ վէպի մէջ: Վէպը երեւակայութեան արդիւնք է, սակայն պատմական ճշմարտութիւն ունի իր մէջ: Տեղահանութեան մասին գրելիս պատմութեան գրքերում տեղ գտած տեղեկութիւններից էի ոգեշնչւում: Գրեցի, թէ գնացողներն ինչեր են թողել իրենց ետեւում, եւ թէ ինչպէս այստեղ տեղափոխուածներն արդէն ոչինչ չեն կտել:

Գրքի հետ կապուած ինչպիսի՞ արձագանքներ եք ստանում:

Արմաշի ուրիշ բնակիչներ բարկացած էին, քանի որ վէպում ներառել էի տեղահանութեան տեսարանները: Մակայն այս վէպը մեզանից առաջ այստեղ ապրած հայերին իմ պարտքն էր: Արմաշի հայերը մեր հարեւաններն էին, չնայեա՞ծ որ նոյն ժամանակաշրջանում չենք ապրել եւ չենք ծանօթացել իրար հետ: Նրանց լքած տարածքներում աւելի ուշ մենք ենք սկսել ապրել: Ոչ մի ժողովուրդ, համայնք ուրախ չի լինի լքելու իր բնակավայրը: Հարիւրաւոր տարիներ այստեղ ապրող մարդիկ «եկէք այստեղից գնանք» չեն ասել եւ գնացել: Նրանք ստիպողաբար լքել են իրենց հարիւրաւոր տարիների բնակավայրերը:

Դրական արձագանք ստացա՞ք:

Թուրքիայի ամէն ծայրից էլ

ընկերներ ունեմ, քանի որ նախկինում արհմիութիւն էի նախագահում: Գիրքս նրանց մի մասին եմ ուղարկել, եւ շատ դրական արձագանքներ եմ ստացել: Ատանայից, Մերսինից եւ մի շարք այլ տեղերից ընկերներիցս դրական մեկնաբանութիւններ եմ ստացել: Սա ինձ համար շատ հաճելի էր:

1915-ի հարիւրերորդ տարին է: Ըստ Ձեզ՝ 1915-ի հետ առերեսման ո՞ր փուլում է գտնուում Թուրքիայի հասարակութիւնը:

Արմաշում կամ Թուրքիայի այլ բնակավայրերում հարիւր տարի առաջ բնակուող հայերը չեն գոյորշիացել: Ես ցանկացել եմ այս վէպը անկեղծօրէն գրել այդ մարդկանց համար: Արմաշի հայերն իմ հարեւաններն են: Ես նրանց հետ խնդիր չունեմ: Ինչ պատճառով էլ որ լինի, մի հասարակութեան հարիւրաւոր տարիներ ի վեր բնակութիւն հաստատած վայրերից բռնի ուժով տեղահանելն անընդունելի է: Պարտաւոր ենք աւերեստել պատմութեանը, ոչ թէ մեր գլուխը թաղենք աւազի մէջ՝ ռասիստական, խտրական զգացմունքներով առաջնորդուելով:

Արմաշում բնակուող հայերի տներն ամբողջովին ոչնչացրել են, սակայն ալրաղացն ու տպագրատունը դեռ կանգուն են: Մէկ էլ ասում են, «Տեղահանութեան ժամանակ հայերն են աւերել այդ տները»: Ինչպէ՞ս է հնարաւոր: Ինչո՞ւ իմ պապերը չքանդեցին Դրամայում, Իսկէչեում գտնուող իրենց տները: Այսօր արդէն գիտենք, որ այդ տները քանդուել են, որպէսզի գնացածներն այլեւ երբեք չվերադառնան: Փիրահմեթ կոչուած տեղ կայ: Մայրս պատմում է, որ այնտեղ դաշտեր էին մշակում: Մի անգամ անձրեւից յետոյ հողից կոճակներ, ճախարակ, կարի պարագաներ են դուրս եկել: Այսինքն, եթէ անգամ տներն աւերեն, կեանքի վկայութիւնները ջրի երես են դուրս գալիս: Կարող են եկեղեցիները, տները քանդել, սակայն կեանքի վկայութիւնները շարունակելու են դուրս գալ հողի տակից:

Շարունակելով՝ էք հայերի եւ Արմաշի մասին գրել:

Վէպի վերջում նկարագրել եմ արտաքսման ժամանակ Արմաշից մինչեւ Փոլաթլը գաղթողներին

### ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԴԵՊԵՐ

Շաբունակուած էջ 14-էն

տարբերում է կենդանուց, սակայն յափշտակելու եւ դիզելու մարմանը ձգտում է շարունակ աւելի ունենալ ի գին այլոց դժբախտութեան: Որոշները այնքան անբարտաւան ու ապերախտ են, որ ուրիշների լաւութիւնները չտեսնելու են ձեւացնում եւ անկարելորդութեամբ անցնում:

Ինչպէս են գոյացել այսքան տեսակ-տեսակ կենդանիներ, թուշուներ, միջատներ եւ ջրային կենդանիներ, ինչ ասենք, այն ինչ որ լսել եւ կարդացել ենք՝ բնութեան հրաշագործութիւնն է այս այլ եւ այլ հրաշալիքների կողքին:

Ձիերի մասին պատմութիւններ շատ կան, այս դէպքի մասին թերեւս լսած չունէք:

Մեր ծանօթ բարեկամ Մելիքը ապրում էր Գորգանում-Իրան, նրա հետ ծանօթացել էի իմ Գորգան ճամբորդութեանս ընթացքում, կարճ ժամանակում նրա հետ մտերմացել էի, նա երկար տարիներ ձիապահութեամբ էր զբաղւում, մի մեծ ազարակում պաշտօնեայ էր, ձիեր էին վարժեցնում մրցութիւնների եւ վաճառքի համար, նա ձիերի խնամատար էր, ինչպէս ծնունդ տայ, ինչպէս նրանց կերակրի եւ վարժեցնի, այնպէս որ ձիանքի ծնունդուց մինչեւ մեծանալը սերտօրէն նրա պատասխանատւութեան էր յանձնուած, նա խղճմտօրէն էր կատարում այն ինչ յանձնարարուած էր իրեն: Մելիքը նիհարակամ եւ միջակ հասակ ունէր՝ ծերութեան սեմին: Նրա գործատէրերը պարսիկ էին, երկար տարիներով նրանց համար էր աշխատում, կարելի է ասել կեանքը պարսիկների մէջ էր անցել, սակայն մաքուր հայերէն էր խօսում պահելով հայկական նկարագիրը, հէնց սրա համար էլ պարսիկ տէրերը նրան սիրում էին եւ անուանում էին՝ «Մելիք արմանի» (հայ մելիք): Նա իր ձիաբուութեան կեանքից այս պատմութիւնն է անում:

-Օրից մի օր ես շատ տխուր եւ յուզուած էի, այսպէս նեղացած իմ անցեալի եւ ներկայ կեանքից ու տարակուսած ապագայի նկատմամբ ձիանից ոչ շատ հեռու կանգնած էի, զարմանալիօրէն զամբուկ ձիանից մէկը մօտենում է ինձ, գլխով ու բերանով սկսում է լիզել ինձ, ապա ոտքերից մէկը բարձրացնելով դնում է իմ ափի մէջ եւ շարժ ու ձեւերով հասկացնում է որ նստեմ, առանց կուսհելու նրա նպատակը նստում

եմ, ձին էդ միջոցին պառկում է եւ գլուխը դնում է իմ գիրկը եւ գորովազուժ աչքերով երկար մնում այդ վիճակում, այդ վիճակը տեսնելով, հասկացայ որ ձիու այդ վարմունքը ինձ փոփոխու ու կեանքի նկատմամբ յոյս ներշնչելու մտքով էր արել: Փաղաքշանքով նրան կանգնեցնում եմ եւ մոռացած իմ անհանգստութիւնը շարունակում եմ իմ աշխատանքը:

Աֆղանիստանում Սովետի գրաւման տարիներում Իսլամ մոշահէղները պարտիզանական կուրներ էին մղում Սովետի դէմ: Ռուսական մի ռազմագործակալու, լեռների մէջ գտնուող, նաեւ Հայաստանից գինւորներ կային: Դրանցից մէկը ժորա անունով, էր երբեմն դուրս էր գալիս զօրանոցից հետախուզութեան նպատակով: Մի օր զօրանոցին մօտիկ ժայռերի մէջ նկատում է օձերի մանր ձագեր, կարծելով լքուած ձագեր են, նա լծում է սրանց խնամքին առանց ձագերի ծնողներից վախենալով, ամէն անգամ հանդիպելիս ինչով որ կարողանում էր նրանց կերակրում էր: Մի օր էլ երբ ձագերին անելիս շարժում է դէպի զօրանոց մէկէն նրա առջեւ փայտի պէս ուղիղ մի խոշոր օձ է կանգնում, ժորան այս տեսարանը տեսնելով վախից կարկամած տեղում մնում է սարսափած, օձն անցնում է գետնի վրայ եւ արագօրէն փաթաթուում է ժորային եւ այնպէս է սեղմում, որ նա տեղից չշարժուի: Ժորան անակնկալի եկած՝ ոչ մի պաշտպանողական արարք չի կարողանում ցոյց տալ եւ ենթարկում է իր ճակատագրին, այդ քանի ըրպէնների ընթացքում զօրանոցը պայթում է ուժեղ բուլուլիչ բարձրացնելով, օձը եւ ժորան փայտացած վիճակում ականատեսն են լինում այդ պայթումին, երբ պայթոցները դադարում են, օձը իր փաթթոցը արձակում է եւ գնում է ձագերի մօտ աչքերը յառած ժորային, ով գիտէ որպէս երախտագիտութիւն որ ձագերին կերակրել է: Ժորան նոր է հասկանում, թէ օձը ինչպիսի մեծ ծառայութիւն է արել, կեանքը օձի շնորհիւ փրկուել էր, բայց ժորան վախից կորցնում է իր սեւ մագերի գոյնը եւ նրանք միանգամից դառնում են սեպ - սպիտակ ինչպէս ծերունի: Այս դէպքը ինձ է պատմել իմ հայաստանցի հարագատը հաւաստիացնելով որ ռուսական թերթը այս դէպքի մասին գրել է ժամանակին: Որքանով է իրական, թողնում եմ ձեր դատողութեան:

Փորձելու եմ գտնել այս հարցերի պատասխանները:

«Ակօս»

**OFFICE SPACE FOR RENT IN PASADENA**

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով

Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

### ՖՈՒՏԳՈՒԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԸ «ԿԵՂԾ» ԵՆ ՈՐԱԿՈՒՄ ԴԱԲԱՃԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԼՈՒՐԵՐԸ



Հայաստանի հաւաքականի 9 առաջատար ֆուտպոլիստներ հանդէս են եկել յայտարարութեամբ՝ «ամբողջութեամբ կեղծ» որակելով Ալբանիայի դէմ կայացած հանդիպման վերաբերեալ «լուրերը, մեկնաբանութիւնները եւ շշուկները»:

Հենրիխ Մխիթարեանը, Եուրա Մովսիսեանը, Արաս Օզբիլիզը, Ռոբերտ Արզումանեանը, Մարկոս Պիզելլին, Գէորգ Ղազարեանը, Գէորգ Կասպարովը, Կառլեն Մկրտումեանը ու Հրայր Մկոչեանը ArmFootball.com եւ News.am կայքերի միջոցով տարածուած յայտարարութիւններում նաեւ նշել ենք. «Մենք լիովին վստահ ենք մեր հաւաքականի իւրաքանչիւր ֆուտպոլիստի վրայ եւ մեր հաւաքականում դաւաճանութիւն փնտռելը որեւէ արդիւնք չի տալու»:

Նոյեմբերի 25-ին, մասնաւորապէս, ՀԾՖ նախագահ Ռուբէն Հայրապետեանն էր յայտարարել, թէ Եւրոպայի 2016 առաջնութեան

ընտրական փուլի Հայաստան-Ալբանիա հանդիպման ժամանակ տեղի է ունեցել «դաւաճանութիւն», ինչի հետեւանքով հաւաքականը 0:3 հաշուով պարտութիւն կրեց:

«Մենք միշտ գործել ենք իշահաւաքականի՝ վնաս տալով թէեւ մեր առողջութեանը, թէեւ բազմաթիւ դէպքերում նաեւ մեր ակումբային կարիերային», - նշել են Հայաստանի հաւաքականի առաջատարները: - «Մեր հաւաքականում միշտ եղել է, եւ հիմա էլ միասնական մթնոլորտ է: Բոլոր ֆուտպոլիստները մէկ ընտանիքի պէս են, հաւաքականի ֆուտպոլիստների միջեւ յարաբերութիւնները նախկինի պէս ջերմ եւ ընկերական են, ու հաւաքականում տիրող վատ մթնոլորտը ոչ մի կերպ պայմանաւորուած չէ հաւաքականի ֆուտպոլիստներին միջեւ կամ յարաբերութիւններով կամ ֆուտպոլիստների պահուածքով», - նաեւ նշել են ֆուտպոլիստները:

### ՋԵՅՄԻ ՎԱՐԴԻՆ ՏՕՆՈՒՄ Է ՊՐԵՍՅԵՐ ԼԻԳԱՅԻ ՌԵԿՈՐԴԸ

Ծաղրանկարիչ Օմար Մոմանին անդրադարձել է «Լեւիթերի» անգլիացի յարձակուող Ջեյմի Վարդինին, որը գերազանցել էր Հոլանտայի հաւաքականի եւ «Մանչեսթեր Յունայթեդսի» նախկին ռմբարկու Ռուբի Վան Նիստելրոյի ռեկորդը:

Անգլիայի առաջնութեան 14-րդ տուրում գրաւելով «Մանչեսթեր Յունայթեդսի» դարպասը՝ 28-ամեայ Վարդին դարձաւ պատմութեան առաջին ֆուտպոլիստը, որը գոլի հեղինակ է դառնում Պրեմիեր լիգայի 11-րդ խաղում անընդմէջ: Նիստելրոյը 2003-ին Անգլիայի առաջնութիւնում գոլ էր խփել 10 խաղերում անընդմէջ:



### ԴՈՐՏՍՈՒՆԴԻ ԲՈՐՈՒՄԻԱՆ ԽՈՇՈՐ ՀԱՇՈՒՈՎ ՅԱՂԹԵՑ ՇՏՈՒՏԳԱՐՏԻՆ

Գերմանական Բունդեսլիգայի 14-րդ տուրում Դորտմունդի «Բորուսիան» սեփական խաղադաշտում 4:1 հաշուով յաղթեց «Շտուտգարտին»:

Դորտմունդցիներին յաջողուեց խփել արագ կոլ, որը երրորդ րոպէին իր անուան դիմաց գրանցեց գերմանացի կիսապաշտպան Գոնսալո Կաստրոն: 19-րդ րոպէին գաբոնցի յարձակուող Պլեր-Էմերիկ Օբամեկանգը կրկնապատկեց հաշիւը՝ խփելով 16-րդ կոլը Գերմանիայի ընթացիկ առաջնութիւնում: Առաջին խաղակեսում «Շտուտգարտին» յաջողուեց կրճատել հաշիւը, սակայն ընդմիջումից յետոյ հիւրերի գերմանացի պաշտպան Գէորգ Նիդեմեյերը դարձաւ ինքնակոլի հեղինակ, իսկ աւելացուած ժամանակում Օբամեկանգը դարձաւ դուբլի հեղինակ՝ վերջակէտ դնելով խաղին: Ռմբարկուների ցուցակում գաբոնցին 3 գնդակով առաջ անցաւ Ռոբերտ Լեանդովսկուց:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Բորուսիայի» մեկնարկային կազմում մասնակցեց ամբողջ խաղին:

Երկրորդ տեղում գտնուող «Բորուսիան» շարունակում է 8 միաւոր գիշել Միւնխենի «Բաւարիային»:

### ԱԱ-2015. ԳՈՒ ՄԻՆԱՍԵԱՆԸ ՆՈՒԱՃԵՑ ՓՈՔՐ ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼ

ԱՄՆ-ի Հիւսթոն քաղաքում աւարտուած ծանրամարտի աշխարհի առաջնութեան վերջին օրը պայքարի մէջ են մտել գերծանր քաշային մարզիկները, իսկ Հայաստանն ունեցել է 3 ներկայացուցիչ:

Գոռ Մինասեանը 203 կգ արդիւնքով փոքր պրոնզէ մետալ է նուաճել պոկում վարժութիւնում, ինչպէս նաեւ հրել է 234 կգ եւ երկամարտում գրաւել չորրորդ տեղը:

Ռուբէն Ալեքսանեանը երկամարտի 433 կգ (192+241) արդիւնքով զբաղեցրել է 8-րդ տեղը՝ միայն անձնական քաշի պատճառով գիշելով գերմանացի Ալմիր վելաքիչին: Ալեքսանեանն ազդրի վնասուածք է ստացել հրում վարժութեան երկրորդ մտնեցման ժամանակ եւ չի կարողացել շարունակել պայքարը:

Կանանց պայքարում Հոնիփի միմէ խուրջուղեանը ցուցադրել է 14-րդ արդիւնքը: Լոնտոնի Օլիմպիական խաղերի պրոնզէ մետալակիրը երկամարտում հաւաքել է



260 կգ (115+145): Տղամարդկանց մրցաշարում պայքարից դուրս է եղել ռուս Ալեքսեյ Լովչեւը, որը երկամարտում ցուցադրեց ռեկորդային 475 կգ (211+264) արդիւնք եւ աշխարհի ռեկորդ սահմանեց նաեւ հրում վարժութիւնում: Կանանց մրցաշարում յաղթեց ռուս Տատյանա Կաշիրինան՝ 333 կգ (148+185):

Այսպիսով, հայ ծանրորդները Հիւսթոնից կը վերադառնան 3 փոքր պրոնզէ մետալով: Աւելի վաղ մետալ նուաճել էին 77 կգ քաշային Անդրանիկ Կարապետեանն ու 105 կգ քաշային Միմոն Մարտիրոսեանը:

### ՎԱՅԷ ԲԱԴԱԼԵԱՆԸ՝ ԵՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՓՈԽԱԽՈՅԵԱՆ

Լեհաստանի Կոլոբժեկ քաղաքում ընթացող Եւրոպայի երիտասարդական առաջնութիւնում Հայաստանը ներկայացնող 52 կգ քաշային Վահէ Բադալեանը նուաճեց փոխախոյանի կոչումը: Եզրափակիչ մենամարտում մեր մարզիկը պարտուեց Անգլիան ներկայացնող Ակաշ Թուքիին եւ դարձաւ արծաթէ մետալակիր: Յիշեցնենք, որ աւելի վաղ պրոնզէ մետալ էր նուաճել Ալեն Դանիելեանը:

Եւ այսպէս, հայ մարզիկներն աւարտեցին իրենց մրցելոյթները Եւրոպայի երիտասարդական առաջնութիւնում եւ հայրենիք կը վերադառնան մէկ արծաթէ եւ մէկ պրոնզէ մետալով:

### ԵՈՒՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆԸ ՀԱՒԱՆԱԲԱՐ ԿԸ ՏԵՂԱՓՈԽՈՒԻ ԱՆԳԼԻԱ

Հայաստանի հաւաքականի եւ Մոսկուայի «Սպարտակի» յարձակուող Եուրա Մովսիսեանը հնարաւոր է ելոյթները շարունակի Անգլիայում: Այդ մասին տեղեկացնում է ռուսական «Վեստի» կայքը:

Ըստ լրատուամիջոցի, 28-ամեայ ֆուտպոլիստի ծառայութիւններով հետաքրքրուած է «Մարախլապատ Ալբիոնի» 1-ին դիվիզիոնում՝ Չեմպիոնշիպում հանդէս եկող «Կոլինգ Պարկ Ռեյնջերսը»: Վերջինիս յարձակուող Չարլի Օստինը գալիք ձմրանը այլ թիմ է տեղափոխուելու եւ այժմ ակումբի ղեկավարութիւնը նրա տեղը նոր խաղացող է փնտռում: Գլխաւոր թեկնածու հենց Եուրա Մովսիսեանն է:

Եուրա Մովսիսեանը Անգլիայում աշխատելու իրաւունք ստանալու հետ կապուած ինդիւրներ չի ունենայ, քանի որ այս տարի կանոնաւոր հրաւիրուել է Հայաստանի հաւաքական:

### 11 ՏԱՐԻ ԱՆՑ. ՎԼԱԴԻՄԻՐ ԿԼԻՉԿՈՅԻ ՍԵՆՍԱՑԻՈՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Ուբրանացի վլադիմիր Կլիչկոն զրկուեց պրոֆեսիոնալ բռնցքամարտի գերծանր քաշային կարգում WBA, WBO եւ IBF վարկածներով աշխարհի ախոյեանական տիտղոսներից:

Գերմանիայի Դիւսելդորֆ քաղաքի բազմաֆունկցիոնալ ստադիոնում Նոյեմբերի 28-ին կայացած մենամարտում 39-ամեայ ուբրանացին մրցավարների միաձայն որոշմամբ պարտուեց բրիտանացի Թայսոն Ֆրերին: 12 ռաունդների ընթացքում Կլիչկոյին չյաջողուեց դրսեւորել իր լաւագոյն որակները: 11-րդ ռաունդում 27-ամեայ Ֆրերիից միաւոր հանցեցին մրցակցի ծոծրակին հարուածելու համար, սակայն դա նրան չխանգարեց հասնել յաղթանակի՝ 115-112, 115-112, 116-111:

Վլադիմիր Կլիչկոն չորրորդ պարտութիւնը կրեց պրոֆեսիոնալ ռինգում, որում տարել է 64 յաղթանակ եւ նախորդ անգամ պարտուել էր 11 տարի առաջ: Անպարտելի Թայսոն Ֆրերին անցկացրեց 25-րդ յաղթական մենամարտը:

